ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ն. ՄԱՌԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ա. ՄԻԽԱՆԿՈՎԱ

ԼԵԶՎԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

Առանձնատիպ «Աշխատությունների ժողովածուի»
առաջին հատորից

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1948

Многоуважаемому Арсению Никитичу на память о Н. Я. Марре. А. Миханкова 30/XII 47

3758

Վ. Ա. ՄԻԽԱՆԿՈՎԱ

ԼԵԶՎԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

Անցյալ դարի 80-ական թվականների վերջին Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում սկիզբ առավ լեզվաբանական մի նոր ուղղություն, որը 1923—1933 թ. թ. ձևավորվեց ու դարձավ նոր ուսմունք լեզվի մասին, որ ավելի հայտնի է «Հաբեթական թեորիա»[1] անունով։

Այդ թեորիան անխզելիորեն կապված է սովետական մեծագույն գիտնականներից մեկի, ակադեմիկոս Ն. Յա. Մառի անվան և գործունեության հետ։ Գիտնականների շողշողուն պլեադայի՝ Ռոզենի, Խվոլսոնի, Յա. Ի. Սմիրնովի, Ժելերովի, Ժուկովսկու, Բարտոլդի, Ա. Ն. Վեսելովսկու, Օլդենբուրգի և ուրիշների աշակերտ ու աշխատանքի ընկեր, սովետական ամենաականավոր գիտնականների մեկից ավելի սերնդի ավագ ընկեր՝ ու այս կամ այն չափով ուսուցիչ Ն. Յա. Մառը հանդիսանում է սովետական գիտության ամենափայլուն ներկայացուցիչներից մեկը, հայն գիտու-

[1] «Հաբեթական թեորիա»-ն ընդգրկում է երկու գիտակցային՝ ընդհանուր ուսմունք լեզվի մասին և հաբեթական սիստեմի լեզուների հատուկ հետազոտություններ, որոնց հիման վրա կազմվեց այս ընդհանուր ուսմունքը։ «Ես մի թեորիայով ես չեմ զբաղվել նյութերի հետ անխզելի կապից դուրս,—ասում է Ն. Յա. Մառը,—«Հաբեթական թեորիայի» հիմքն է կազմում ոչ թե «թեորիան», այլ մատերիալական լեզվանյութը անկախ որևէ հանրաճանաչ թեորիական կառուցումներից։ Համարձակություն ունեմ պնդելու, որ ես շարադրում եմ միայն այն, ինչ թելադրել են և թելադրում են այդ բազմազան մատերիալական նյութերը։ Ասում են, որ դա էլ հենց թեորիա է, կառուցված որոշակի նյութի վրա։ Ներեցեք, եթե դա թեորիա է, ապա դա կառուցված չէ որոշակի նյութի վրա, այլ աճել է առաջնորդում բոլորովին անսպաս նյութերից, որոնք այս ուսումնասիրության շնորհիվ էլ հենց դարձել են որոշակի»։ «Հաբեթական թեորիայի հիմնական դրույթները». Ն. Յա. Մառի ընտիր աշխատություններ, I հատոր, էջ 198—199։ Հետագայում Մառի աշխատություններից քաղվածքները կատարվում են առանց նրա անվան կրկնության։

թյան, որի մարդիկ, ըմբռնելով գիտության մեջ սահմանված տրադիցիաների ուժն ու նշանակությունը և հմտորեն օգտագործելով դրանք հօգուտ գիտության, այնուամենայնիվ չեն ուզում լինել այդ տրադիցիաների ստրուկները, այն գիտության, որը համարձակություն ունի վճռականապես ջարդելու հին տրադիցիաները, նորմաները, դրույթները, երբ նրանք հնանում են, երբ նրանք արգելք են հանդիսանում առաջընթացի համար, այն գիտության, որը կարող է ստեղծել նոր տրադիցիաներ, նոր նորմաներ, նոր դրույթներ։[1]

Սկսած ուսանողական հոդվածից՝ առաջին տպագիր աշխատությունից և մինչև իր գիտական-գործունեության վերջին օրը Ն. Յա. Մառը չէր վախենում գնալ հանրաճանաչ դրույթների դեմ, որոնց կասկածելի կամ սխալ լինելը նրա համար բացահայտ էր դառնում՝ լինի դա առաջներում անհայտ կամ չըմբռնած նյութերը, նոր, առաջներում չարված դրանց մեկնաբանությունը, թե հետազոտման նոր մեթոդը։ Համարձակ, կոմպրոմիսներ չճանաչող գիտական խիզախումը, որ կանգ չի առնում մինչև այդ ճիշտ թվացող իր սեփական պնդումներից, նույնիսկ ամբողջական թվացող կոնցեպցիաներից բացահայտորեն հրաժարվելու առջև, կարմիր թելի պես անցնում է Ն. Յա. Մառի 45-ամյա գիտական աշխատանքի միջով։

Հարաշարժ առաջընթաց դեպի նոր խնդիրները, նոր նյութերը, նոր մեթոդները, լայն ու խոր աճումը՝ հասցրին այնտեղ, որ հաբեթական թեորիան հնդեվրոպաբանության մի յուրահատուկ տարատեսակից դարձավ լեզվի ու նրա հետ անխզելիորեն կապված մտածողության որակապես նոր ուսմունք, որը լեզվաբանական հիմնական հարցերում կանգնած է տրադիցիոն գիտությունից սկզբունքորեն տարբեր դրույթների վրա։ Կատարելապես իրավացի է Վանդրիեսը, երբ հավաստում է, որ հաբեթաբանության էությունը հակասում է այն իսկ սկզբունքներին, որոնց վրա խարսխված է համեմատական լեզվաբանությունը, իսկ իր լեզվաբանական աշխարհայացքի էությունը Մառը ձևակերպել է հետևյալ խոսքերով. «Լեզվի ուսմունքը, նայած իր ուսումնասիրած լեզվաբանական նյութին, իբրև գիտություն, գոյության իրավունք ունի միայն որպես մոնիստական կառուցվածք»։[2]

---

[1] Ի. Վ. ՍՏԱԼԻՆ, Ճառ բարձրագույն դպրոցների աշխատողների ընդունելության ժամանակ Կրեմլում։ „Молодая гвардия“, 1938, էջ 1—2։

[2] Հաբեթական թեորիայի ակտուալ պրոբլեմները ու հերթական խնդիրները, Ընտ. երկ. III հատ., էջ 70։

Իր բարեկամներից ոմանց խորհուրդներին՝ չվարկաբեկել ականավոր հնագետ կովկասագետ ֆիլոլոգի իր հանրաճանաչ անունը,[1] հակառակ չգնալ գիտության կողմից սահմանված մեթոդներին ու դոգմաներին, Ն. Յա. Մառը պատասխանեց. «բախտի կամքով մեզ վիճակված չէ հանգիստ վայելել, գիտական անդորր աշխատանք կատարել տրադիցիայով սրբագործված շրջանակներում... Չի կարելի այսուհետև աշխատել առանց արհեստականորեն ստեղծված արգելքները վերացնելու։ Պետք է սրբել դրանք...այն բանի իմացությամբ, որը նյութապես չգիտեին, այլապես չի կարելի տեսնել աշխարհի մեծ կապը իր կենդանի՝ համապարփակորեն կապակցված խոսքի մեջ»։[2] Այդ կապը նա որոնում է համառորեն ու անշեղ, որոնում է մարդու գործունեության բազմազան արտահայտությունների մեջ նրա պատմության բոլոր էտապներում։ Լեզվաբանության պատմության, ազգագրության, հնագիտության, ապա նաև նյութական կուլտուրայի պատմության, կրոնի պատմության, գրականության պատմության, ֆոլկլորի մեջ— ամենուրեք նա դնում է նոր խնդիրներ, բացում է նոր ուղիներ, նոր ձևով է վճռում ասես ընդմիշտ լուծված պրոբլեմները։ Իր հայացքի ճշմարտությամբ նյութական հուշարձանների զարմանալի գիտակ և նրանց մեկնաբանող, նուրբ դիտող ազգագրագետ, տեքստի անդուգական քննադատ, գիտելիքների լայնությամբ ու խորությամբ չգերազանցված լեզվաբան՝ նա իր հետազոտությունների մեջ ամենանուրբ, մանրազնին անալիզը միացնում է անծայրածիր հորիզոններ բացող սինթեզի հետ, իր ուսումնասիրած երևույթներին

---

[1] Ն. Յա. Մառի նշանակությունն իբրև կովկասի լեզուների կարկառուն, աշխարհի լավագույն գիտակի ընդունում են նաև նրա սկզբունքային հակառակորդները՝ հնդեվրոպաբան լեզվաբանները։ Այսպես, արդի լեզվաբանության հանրաճանաչ Մեյեն, որ խիստ բացասական վերաբերմունք ուներ հաբեթաբանության, շարունակ նշում է, որ Մառը միակ լեզվաբանն է, որ ամենից լավ գիտե վրացերեն լեզուն և ամենից ավելի պատրաստված է նրա պատմությունը շարադրելու համար» (Bulletin de la Société de linguistique (BSL), 1929, պրակ 2, էջ 195)։ Նույնն է ասում նաև Վանդրիեսը. նշելով, որ հաբեթաբանությունը հակասում է այն սկզբունքներին, որոնց վրա խարսխված է հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունը, նա ընդունում է, որ Ն. Յա. Մառը ավելի լավ գիտե կովկասի լեզուները, քան որևէ մեկը աշխարհում (Revue celtique, 1924, էջ 292)։ Նույն կարծիքն ուներ նաև հայտնի վրացագետ P. Peeters, որը 1908 թ. գրում էր, որ Ն. Յա. Մառը մրցակիցներ չունի հայ-վրացական ֆիլոլոգիայի մեջ (Revue des etudes scientifiques, 1908, նոյեմբեր, էջ 1—3)։

[2] Առաջաբան հաբեթաբանական ժողովածուի, պրակ I, էջ 1—3։

հետամուտ լինելով նրանց ծագման ու զարգացման, նրանց փոփոխությունների, կապերի ու պայմանավորվածության մեջ։ «Կոնկրետ նյութը հետազոտելով իր՝ լեզվաբանի մասնագիտությամբ,— ասում է նա,— ես ստիպված էի բազմիցս ձևափոխելու իմ սկզբնապես ձևական-համեմատական մեթոդը (այսպես կոչված՝ հնդեվրոպական կոմպարատիվիզմ), որովհետև իմ աշխատանքի նվաճումները գերաճում էին այն մեթոդը, որով նա սկսված էր։ Մեթոդը մաշվում էր։ Դա կատարվում էր նաև համեմատական մեթոդի սահմաններից, նրա արգելագծից դուրս գտնվող նոր լեզվական նյութի ընդգրկման և համեմատության նոր եղանակի պատճառով։ Հետազոտական աշխատանքը խորանում էր ոչ միայն իրենց իսկ լեզվական երևույթների յուրատեսակությունից, այլև լեզվի հետ շաղկապված փաստերի հաշվառումից, որոնք գտնվում են լեզվի սահմաններից դուրս»։[1]

Հնդեվրոպաբանության էական արատներից մեկը, որ զգալիորեն կանխորոշում է նրա անընդունակությունը լուծելու և նույնիսկ ճիշտ դնելու հիմնական հարցերը, Ն. Յա. Մառը համարում է մի լեզվաընտանիքի շրջանակներում ներփակվելը, առանց հաշվի առնելու այլ սիստեմների (այսպես կոչված՝ ընտանիքների) լեզուների նյութերը,[2] հավասարապես և լեզվի սահմաններից դուրս գտնվող նյութերը։ Սահմանափակելով իրենց հետազոտական բազան, հնդեվրոպաբանները դրանով իսկ կրճատում են իրենց աշխատանքի մասշտաբը, այսպես կոչված, պատմական լեզուների տարածման ժամանակագրական և տերիտորիալ սահմաններով.

---

[1] Հաբեթական թեորիան դասակարգային պայքարի գործիք. „Юный пролетарий" ամսագիր, 1930, № 17—18, էջ 19։

[2] Ճիշտ այսպես, այսինքն մի սիստեմի լեզուների սահմաններից դուրս գալով հենց ճիշտ է համարում լեզվաբանական աշխատանքի կառուցումը Jespersen-ը. «Զարգացման (լեզուների) հնարավորությունները այնքան բազմազան են, գոյություն ունեն մարդկային մտքերի քիչ թե շատ միատեսակ արտահայտելու այնքան անհամար ուղիներ, որ համարյա անկարելի է համեմատել զանազան ընտանիքների լեզուները» (Iespersen. Language, its nature, development and origin, London, 1931, էջ 428)։ Դրան ի հակադրություն Whitney տակավին 1875 թ. պնդում էր, որ «հասել է ժամանակը, երբ հնդեվրոպական լեզուների պատմությունը հսկայական քանակությամբ հարցեր է դնում, որոնք չեն կարող լուծվել առանց ստորին լեզուների խորացած հետազոտման (les langues inferieures)։ Պետք է սահմանել իբրև լեզվաբանության հիմնական սկզբունք, որ լեզվի ոչ մի երևույթ չի կարող ճիշտ գնահատություն ստանալ, եթե այն չի համադրված մարդկության բոլոր լեզուների համանման երևույթների հետ» (Whitney. La vie du langage, էջ 168)։

«Հնդեվրոպաբանների ուսմունքի համաձայն՝ լեզվի ու լեզվական երևույթների ուսումնասիրման շրջանը սահմանափակվում է հնչյունական լեզվի զարգացման ժամանակի ընդգրկումով՝ սկսած նրա արդեն միանգամայն կազմավորված և որոշակի տիպի վիճակում կայունացած մոմենտից, մինչդեռ հաբեթական լեզվաբանությունը կարողացել է հասնել մինչև ուսումնասիրման բուն օբյեկտը, հաղորդակցության այդ գործիքը՝ սկսած այն դարաշրջանից, երբ նա հնչյունական լեզու չէր, այլ գծային շարժումների լեզու, ձեռնալեզու, հիմնականում նաև միմիկա»:[1]

Հնդեվրոպաբանությունը, լինելով համեմատաբար ոչ մեծ ժամանակաշրջանի մի քանի խմբի լեզուների ուսմունք, թվում է, թե հիմք չունի հավակնելու ընդհանուր լեզվաբանության դերին: Ասենք սա երբեմն ընդունում են կամ ստիպված են լինում ընդունել հենց իրենք հնդեվրոպաբանները: Վանդրիեսը չի ժխտում, որ համեմատական մեթոդը բավական նեղ շրջանակներ ունի. «Թեև համեմատական մեթոդը ուղղված է դեպի հեռավոր անցյալը, նա միայն իրականում նշանակություն ունի հետին դարաշրջանների համար՝ լուսաբանելով տեքստերով մեզ հասած լեզուների դետալները»:[2] Այլ կերպ չի խոսում նաև Մեյեն. նա գտնում է, որ ժամանակ է հրաժարվելու հնդեվրոպական լեզվաբանությունն ընդհանուր լեզվաբանության հետ նույնացնելու չափազանց տարածված սովորությունից:

Մինչդեռ սրան հակասում է ոչ այլ ոք, քան Մեյեն, հայտարարելով, որ «եթե հնդեվրոպական լեզվախումբը ամենակարևորն է աշխարհում, նա միաժամանակ ամենալավ ուսումնասիրված է և թույլ է տալիս արդեն այժմ գաղափար ունենալու լեզուների զարգացման ընդհանուր օրենքների մասին»:[3] Չմոռանանք, սակայն, որ այդ ընդհանուր օրենքները ոչ մի չափով չեն վերաբերում լեզվի ծագման հարցին, առանց որի լեզուների զարգացումը նա չի կարող հասկացվել: Մեկուսի վերցրած մի քանի լեզուների համար սահմանված զարգացման տենդենցները բոլոր լեզուների

---

[1] Հաբեթաբանությունը ԼՊՀ-ում, Ընտ. երկ. I հ., էջ 257:

[2] Vendryès, Le langage, 335 (ֆր. հրատ.): Համեմ. Մեյեյի նույնպիսի դատողությունները. նա նշում է, որ համեմատական լեզվաբանության նպատակն է գրավոր մեզ հասած լեզուների համապատասխանության մեթոդական ուսումնասիրությունը (Introduction, էջ 29, ֆր. հրատ.), որ հնդեվրոպաբանության գլխավոր երախտիքն այն է, որ նա «թույլ է տալիս ըմբռնել պատմականորեն վավերացված փաստերը» (նույն տեղ, էջ 435):

[3] Meillet, Introduction, էջ 434 (ֆր. հրատ.):

վրա փոխադրելու նույնպիսի հակում մենք կգտնենք նաև ուրիշ լեզվաբանների, օրինակ Iespersen-ի և Pedersen-ի մոտ[1]։

Իսկ հաբեթական թեորիան լեզվի գիտություն է համարում այն ուսմունքը միայն, որը հաշվի է առնում աշխարհի բոլոր լեզուների առանձնահատկությունները և, ելնելով դրանցից յուրաքանչյուրի կոնկրետ սիստեմից, ոչ միայն հատկացնում ու նշում է նրանցից յուրաքանչյուրին պատկանող տեղը բոլորի մեջ, այլև երևան է բերում այն ուղիներն ու շրջանակները, որոնց մեջ կարող է և այսուհետև պետք է ընթանա հատուկ աշխատանքը յուրաքանչյուր լեզվի վրա, յուրաքանչյուր լեզվի սպառիչ չափով խորացրած հետազոտումը։[2]

Լեզվական նյութի ընդգրկման մեջ եղած տարամտությունը պարզում է նաև տարամտություն այն խնդիրներում, որ դնում են իրենց առջև հաբեթական լեզվաբանությունն ու հնդեվրոպաբանությունը։ Հաբեթական թեորիան հետաքրքրությունը փոխադրում է ընդհանրական լեզվի ձևական կողմից դեպի նրա հասարակական ֆունկցիան, հասարակայնորեն ստեղծվող նրա իմաստավորումը և համապատասխանորեն իմաստավորումից կախված ձևավորումը։ Հաբեթական թեորիան գտնում է, որ պատմական իրականության կոնտեքստից պոկված լեզվական երևույթը անխուսափելիորեն մնում է անհասկանալի և կորցնում է իր նշանակությունն իբրև պատմական վավերագիր, որ չափով հաշվի չի առնված նրա ծագումն ու զարգացումը, նրա կապերն ու միջնորդավորումները։ Իսկ Մեյեն այսպես է որակում ընդհանուր լեզվաբանության խնդիրները. ժամանակակից լեզվաբանությունը, որ հիմնվում է անցյալի և արդիականության փաստերի վրա, չի ջանում որոշել, թե ի՛նչպես է կազմվել լեզուն, ի՛նչպես են առաջին անգամ կազմավորվել քերականական ձևերը, այլ միայն փորձում է որոշել, թե ի՛նչ պայմաններում, ի՛նչ օրենքների համաձայն՝ ժամանակով ու տարածությամբ սահմանափակված՝ դիտվող լեզվական երևույթները՝ մնայուն ու համընդհանուր՝ համապատասխանում են ու իրար փոխարինում։[3]

---

[1] Iespersen, the Language, էջ 360... Նույն երևույթն է նշում նաև Ս. Է. Բիխովսկայան իր գրախոսությունների մեջ Pedersen-ի Linguistique Sciense in the 19th century (Լեզու և մտածողություն, II պրակ, էջ 164) աշխատության մասին։

[2] Նույն այնպես դժվար է գտնել լեզվաբան-տեսաբան. Ընտ. երկ. II հ., էջ 399։

[3] Meillet, հիշ. աշխ. էջ 473։

Մեյեն ևս այդ ընդգծում է. «լեզվաբանը երբեք հետամուտ չի լինում ծագման. նա միայն կարող է քիչ թե շատ լրիվ, քիչ թե շատ ուշադիր ուսումնասիրել տվյալ լեզվի երկու քիչ թե շատ ճշտորեն որոշակի թվականների միջև ընկած պատմությունը»:[1]

Ն. Յա. Մառը հիմք ունի հավաստելու, որ ոչ միայն հնչյունային լեզվի ձևական ընկալման մեջ ևս հնդեվրոպաբանությունն ու հաբեթաբանությունը չեն կարող լիակատար չափով տարաձայն չլինել միմյանց հետ նաև այն պատճառով, որ նրանք լեզվի թե՛ ժամանակագրական և թե՛ սոցիալական ընդգրկման տարբերության պատճառով ընկել են տարբեր դիտակետերի վրա, բնականաբար զանազան ոչ միայն հորիզոններով... այլև ժամանակի խորքի վերաբերմամբ զանազան հեռանկարներով»:[2] Ուստի և Ն. Յա. Մառը եզրակացնում է, որ «հնդեվրոպաբանությունը ոչ թե գիտություն է լեզվի, նրա ծագման, ձևավորման ու էվոլյուցիաների մասին ռևոլյուցիաների ու վերակազմությունների որոշակի էպոխաներում, այլ առանձին լեզվախմբերի կազմավորված ձևերի պատմություն,[3] իր կապվածությամբ[4] հայտնի գերիշխող լեզուների հանդեպ, որոնք կաշառում են պատմական էպոխաների կուլտու-

---

[1] Meillet, Les langues dans l'Europe nouvelle, էջ 66: Ժամանակակից լեզվաբանության համար թերևս օգտակար է մտաբերել լեզվաբանության խնդիրների վերաբերյալ անմիջականորեն ավելի ընդարձակ հարցադրումը համարյա 70-ամյա հնությունն ունեցող մի աշխատության մեջ, երբ համեմատական լեզվաբանությունը դեռևս չէր ստացել իր հնարավորությունները: Այն ժամանակ գտնում էին, որ «լեզվաբանության խնդիրն է նախ լեզուն ըմբռնել իր ամբողջության մեջ, ապա իր տարատեսակներում... Նրա նպատակն է ի հայտ բերել այդ տարատեսակների պատճառները, այլև լեզվի ու մտածողության հարաբերությունը և այդ հարաբերությունների ծագումը: Նա ուսումնասիրում է լեզվի նշանակությունն անցյալում ու ներկայում և, կարելույն չափ, նրա սաղմերը (les premiers commencements): Նա ջանում է որոշել լեզվի դերը իբրև մտքի օժանդակի (auxiliaire) և նրա ազդեցությունը մեր ցեղի զարգացման վրա: Վերջապես, նա հետապնդում է նաև մի օժանդակ նպատակ. ուսումնասիրել մարդկության պրոգրեսը, մարդկային ցեղերի պատմությունը, նրանց կապերն ու ազգերը, որքան որ դրանք կարելի է ուսումնասիրել ըստ լեզվի տվյալների» (Whitney, Հիշ. աշխ. էջ 3—4):

[2] Հաբեթաբանությունը Լեն. Պետ. Համ. Ընտ. երկ. I հ., էջ 257—258:

[3] Համեմ. Saussure-ի խոսքերը. «լեզվաբանության միակ ռեալ առարկան է արդեն կազմավորված լեզվի նորմալ ու կանոնավոր կյանքը»:

[4] Համեմ. բացի Մեյեի արդեն հիշատակված խոսքերից Պեդերսենի բացատրությունը հնդեվրոպական լեզուների հատուկ նշանակության մասին, իբրև հիմքի, լեզվաբանության մշակման համար «նրանց հնության, նրանց բազմազանության հետևանքով, ավելին նրանց անվիճելի նմանությամբ համ-

րականությամբ և սրա խարուսիկ հնությամբ, այսինքն՝ դա ֆիլոլոգիա է, սկզբնապես և մինչև մեր օրերը կլասիկ ֆիլոլոգիա։ Լեզվի գիտությունը (լեզվագիտությունը) և ֆիլոլոգիան գիտության նույնպիսի տարբեր բնագավառներ են, ինչպես բուսաբանությունը և այգեգործությունը։[1]

Լեզուն բնորոշելով իբրև «կոլեկտիվ գիտակցության (կեցության) կոլեկտիվ դրսևորում կախված մտածողության տեխնիկայի ու աշխարհայեցության ձևակերպումից ու ծավալից»,[2] և սահմանելով, որ լեզվի «ֆունկցիան է արտահայտել այն, ինչ հասարակայնությունը հավաքականորեն պահանջ է զգում արտահայտելու, և արտահայտելու այնպես, ինչպես այդ անհրաժեշտ է հասարակության համար»,[3] հաբեթական թեորիան լեզուն ուսումնասիրում է անխզելիորեն կապված լեզուն ստեղծող հասարակության պատմության, նրա տնտեսության սոցիալական կարգի ու աշխարհայեցության հետ։ «Լեզվական կենսական երևույթները միայն նրանց օրգանական կապակցությամբ նյութական կուլտուրայի պատմության և հասարակայնության հետ»,[4] անդադար կրկնում էր Ն. Յա. Մառը, որքան էլ «մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնենք լեզվի զարգացման ստեղծարար պրոցեսի ներքին պատճառների վրա, մենք բոլորովին էլ չենք կարող այդ պրոցեսը գտնել բուն իսկ լեզվի մեջ։ Մենք իրերի ուժով, լեզվական փաստերի վկայությամբ ստիպված ենք հեռամուտ լինելու լեզվի ստեղծարար պրոցեսին, ստեղծարար գործոններին,

դերն։ Բացի դրանից, նրանք հնչաւութեամբ էին ուշադրութիւն դարձնում իրենց վրա, որովհետև նրանք մայրենի լեզուներ էին նրանց համար, որքեր էին և հանդիսանում են քաղաքակրթության պարագլուխները»։ Pedersen, Հիշ. աշխ. էջ 241—242 (թարգմված է ըստ Մ. Լ. Բիխովսկայայի թարգմանության (Լեզու և մտածողություն, II պրակ, էջ 164)։ Այս տեսակետը արտահայտված է հին տրադիցիաներով և ահա մենք գտնում ենք 1875 թ. աշխատության մեջ համարյա նույն ձևակերպումով։ Լեզվաբանների առավելագույն ուշադրությունը դեպի հնդեվրոպական լեզուները Whitney բացատրում է այսպես. «Շատ հիմքեր կան, որոնցից հնդեվրոպական լեզվաընտանիքը գերիշխի մյուս լեզուների վրա և որոնցից լեզվաբանները առավելագույն ուշադրություն հատկացնեն նրա ուսումնասիրությանը... Գլխավոր հիմքն այն է, որ հնդեվրոպական լեզվաընտանիքը պատկանում է գերիշխող ցեղին, որը մրցակիցներ չի ունեցել և չունի»։ Whitney, Հիշ. աշխ. էջ 155.—Վ. Մ.։

[1] Լեզվի ծագման մասին, Ընտ. երկ. II հ., էջ 179։

[2] Լեզու և մտածողություն, Ընտ. երկ. III հ., էջ 112։

[3] Հաբեթական թեորիան դասակարգային պայքարի գործիք. էջ 20։

[4] Հաբեթական թեորիան, Ընտ. երկ. II հ., էջ 70։

նյութական կուլտուրայի պատմության մեջ և կազմավորված աշխարհայեցողությունների այդ բազայի վրա։[1] Հաբեթական թեորիան գիտե, որ ոչ միտքը, ոչ էլ լեզուն ինքնին առանձին թագավորություն չեն կազմում, նրանք իրական կյանքի արտահայտությունն են միայն։[2] Ուստի և «Լեզվի նոր ուսմունքը» ուսումնասիրում է այդ իրական կյանքը, ձգտելով ամեն կողմից ընդգրկել ու բացահայտել լեզուն ստեղծողի՝ մարդկային հասարակության պատմությունը։ Ն. Յա. Մառի համար միանգամայն անընդունելի են Մեյեի հետևյալ մտքերը. «Համարյա երբեք հնարավոր չի լինում ապացուցել լեզվական և հնագիտական տվյալները։ Բացի դրանից, մենք չգիտենք, թե ո՛րտեղ, ե՛րբ և ո՛վ է խոսել այն լեզվով, որից առաջացել են պատմականորեն վավերացված լեզուները։ **Պատմաբանի համար հետաքրքրական այս հարցը կարևոր չէ լեզվաբանի համար**... Լեզվաբանի խնդիրն է միայն մեկնաբանել այն համապատասխանությունների սիստեմը, որ նա հավաստում է զանազան լեզուներում, իսկ այն փաստը, որ հնդեվրոպական լեզվով խոսել են Ասիայում թե Եվրոպայում, ոչինչ չի փոխում այդ համապատասխանությունների մեջ, որոնք միակ իրականություններն են, հետևաբար և միակ առարկան հնդեվրոպական լեզուների պատմական քերականության ուսումնասիրության»։[3]

Հենց նման դատողությունները, որ այն, ինչ հետաքրքրական է պատմաբանի համար, հետաքրքրական չէ լեզվաբանի համար և ընդհակառակն, օրինական հիասթափություն է հարուցում նաև հնդեվրոպաբաններից ոմանց մեջ։ Դրանցից մեկը դառնությամբ ասում է. «Անվանված հեղինակությունների նմա՛ն վերաբերմունքը վհատեցնում է։ Նրանք ոչ միայն զգուշություն են հանձնարարում այն հետևությունների վերաբերմամբ, որ կուզեինք անել լեզվաբանական տվյալների հիման վրա, այլև առհասարակ կասկածի տակ են դնում լեզվական փաստեր սահմանելու հնարավորությունը, որոնք բավականաչափ ինքնուրույն են սոցիալական կյանքի երևույթների ուսումնասիրության ընթացքում օգտագործելու համար»։[4] Հասարակագիտական մյուս գիտություններից երես դարձնելու և,

---

1 Հաբեթական թեորիա, Ընտ. երկ. II հ., էջ 107—108։

2 Կ. Մ ա ր ք ս և Ֆ. Է ն գ ե լ ս, Գերմանական իդեոլոգիա, Կ. Մ ա ր ք ս և Ֆ. Է ն գ ե լ ս, Երկեր. IV հ., էջ 435։

3 Meillet, Introduction, էջ 59 (Ֆր.). ընդգծումը իմն է։ Վ. Մ.

4 Q. van Langenhove, La linguistique et l'histoire des religions, Linguistische Studien ժողովածուում, I, էջ 28։

իր հերթին, լույսի ճառագայթները նրանցից ծածկելու տենդենցը, որոնք լեզվի միջոցով կարող էին սփռվել մարդկային հասարակության պատմության վրա, հատուկ է ոչ միայն Մեյեին, այլև հնդեվրոպաբանների մեծ մասին (եթե ոչ բոլորին), այդ թվում ինչպես մենք տեսնում ենք, նաև, այսպես կոչված, սոցիոլոգիական շկոլայի ներկայացուցիչներին։ Վանդրիեսը, որ մեկ անգամ Ն. Յա. Մառին կշտամբում էր ազգագրությունը լեզվագիտությանը խառնելու համար, ինքը գտնում է, որ լեզվաբանը լեզուների ազգակցությունը ապացուցելու համար կարող է օգտվել միայն լեզվական տվյալներից։[1] Ի վերջո, սոցիոլոգիական շկոլայի իրենց իսկ ներկայացուցիչների խոսքերով, պարզվեց, որ լեզվաբաններին հաջողվել է պարզել հնդեվրոպական լեզուների նախապատմությունը, բայց նրանք չգիտեն, թե ովքեր են խոսել այդ լեզուներով,[2] նրանք չեն կարող, նմանապես, ասել, թե ինչ գործիքներ էր օգտագործում այն ժողովուրդը, որի լեզուն մենք գիտենք և նույնիսկ, թե ինչ չափով համապատասխանություն գոյություն ունի լեզուների և կուլտուրաների միջև։[3]

---

[1] Vendryès, Le langage, էջ 359 (ռուս. հրատ., էջ 278)։

[2] Նույն տեղ, էջ 357 (ռուս. էջ 277)։ Հմմտ. Մեյեի խոսքերը. «Լեզվաբաններին շատ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես են ապրում այն ժողովուրդները, որոնց լեզուն նրանք ուսումնասիրում են, բայց պատմական վկայությունները չափազանց ուշ ժամանակների են ամենուրեք, առանձնապես հնդեվրոպական հնագիտությունը նույնպես օգնություն չի բերում» (BSL, 29 հ., II պրակ, էջ 111)։ Մեյեն բազմիցս կրկնում է այս միտքը։ Օրինակ, հմմտ. նրա „La religion indo-européenne" հոդվածի հետևյալ հատվածը. «Համեմատական քերականությունը համահնդեվրոպական լեզվով խոսող ժողովրդի կուլտուրայի վիճակի մասին կարող է տալ միայն աղոտ, թերի և հաճախ կասկածելի տեղեկություններ։ Սրա փոխարեն, երկար ժամանակ պատրանքներ ունեինք, որոնցից այժմ հրաժարվել ենք» (Linguistique historique et linguistique générale գրքում, էջ 325)։ Ճիշտ է, Մեյեն ավելացնում է. «լեզվաբանությունը չի կարող փոխարինել պատմությանը և չի հավակնում դրան։ Բայց որչափով որ գրավոր հուշեր վկայություններ չկան, միայն լեզվաբանությունից կարելի է հուսալ ստանալու այն էպոխաների լուսաբանությունը, որոնց իրադարձություններից ու մտքերից ոչ մի հետք չի մնացել» (նույն տեղ, էջ 323)։ Սակայն այս հայտարարությունը մնում է լոկ հայտարարություն. հնդեվրոպաբանությունը պատմաբաններին չի տվել նրան պակասող տեղեկությունները անգիր էպոխաների հասարակական կյանքի մասին, իսկ երբ Մեյեն փորձում է այդ անել, ապա նրա պատմական եզրակացություններից ստացվում է կատարյալ անտի-[illegible] (տես՝ ստորև, էջ 19—20)։

[3] Նույն տեղ, էջ 358 (ռուս. էջ 278)։

Այս վերջին փաստը այնքան բնորոշ է հնդեվրոպաբանության համար, որ արժե մի փոքր կանգ առնել նրա վրա։ Եվ, իրոք, ի՞նչպես է հնդեվրոպաբանությունը մեկնաբանում կուլտուրայի պատմության, հասարակական մտածողության պատմության և լեզվի պատմության փոխհարաբերությունների հարցը։ Նախ և առաջ նկատենք, որ այս հարցում հնդեվրոպական լեզվաբանությունը ընդհանուր պատասխան և պարզորոշ արտահայտված կարծիք չունի։ Սոցիոլոգիական շկոլան, մի կողմից ընդունելով, որ լեզուն սոցիալական երևույթ է, չի կարող ամբողջովին բացատրել նույնիսկ լեզվական կառուցվածքի կապը հասարակական մտածողության և հասարակական զարգացման միջև։ Ուստի, օրինակ, Marcel Cohen այս կապը զգուշորեն ձևակերպում է այսպես. «ընդունում ենք... որ համապատասխանություն պետք է լինի, որը առայժմ քիչ է ենթարկվում բնորոշման, այդ լեզվով խոսողների լեզվի կառուցվածքի և սոցիալական ու մտավոր զարգացման միջև»։[1] Վանդրիեսը գտնում է, որ «սոցիալական ծագում ունեցող քերականական կատեգորիաները հենց կախում ունեն հասարակությունից»։[2] Մեյեն նույնպես գիտե, որ «զանազան էտապներում փոխվում էին նյութական կյանքի պայմանները և հնդեվրոպական լեզվի ժողովուրդների կուլտուրայի մակարդակը», ինչպես նաև այն, որ «բուն երևույթին, որոշ լեզվական երևույթներ որոշակի հարաբերության մեջ են գտնվում կուլտուրայի մակարդակի հետ»։[3] Նա գտնում է, որ պետք է փորձել պարզելու, թե ի՞նչպես է լեզվական կառուցվածքը շաղկապվում խոսողների մտածողության հետ, բայց նախազգուշացնում է, որ չպետք է չափազանցնել լեզվի կառուցվածքի համապատասխանության աստիճանը և հասցնել կուլտուրայի մակարդակին։[4] Մեյեն հարց է դնում, թե «ձևաբանության տարբերությունը համապատասխանո՞ւմ է արդյո՞ք տարբեր մտածողության։ Այս հարցը դժվար է լուծել այն պատճառով, որ ձևաբանական սիստեմը երկար է ապրում և ավելի երկար է ապրում իրեն ստեղծած մտածողությունից»։[5] Մեյեն միանգամայն իրավացի է. լեզվական կառուցվածքը ոչ միայն անհապաղ ու անմիջականորեն չի անդրադարձնում հասարակական մտածողությունը, այլև այդ

---

[1] RSL, 28 հ., պրակ I, էջ 26։
[2] Վանդրիես, Լեզու, էջ 113 (ռուս.)։
[3] Meillet, Introduction, էջ 412։
[4] RSL, 27 հ., պրակ II. էջ 18։
[5] Նույն տեղ, էջ 26, պրակ I—II, էջ XXI։

մտածողությունը հետ է մնում սոցիալական կարգի և նյութական բազայի զարգացումից։ Բացի դրանից, լեզվի ոչ բոլոր տարրերն են հավասարաչափ, միատեսակ ձևով ու միաժամանակ անդրադարձնում հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները։ Ինչպես հայտնի է, ամենից ավելի դյուրափոփոխ է բառապաշարը. ձևաբանությունն ավելի կայուն է, ընդ որում հին ձևը չի անհետանում միանգամից ու անհետ, այլ հաճախ որոշ ժամանակ շարունակում է գոյություն ունենալ նորի հետ և միայն աստիճանաբար դուրս է մղվում նրա կողմից։ Այս գոյություն ունեցող ձևերը լեզվի մեջ արտահայտվում են իբրև կրկնակներ, կամ ընտրական ձևեր, խոսակցական լեզվի «անկանոնություններ» և այլն, մինչդեռ նրանք ոչ այլ ինչ են, բայց եթե կամ հին, մահացող տեսակ, կամ նոր առաջացող։ Պալեոնտոլոգիական մեթոդը հաստատել է, որ «յուրաքանչյուր նոր սիստեմ (լեզվի) պահպանում է հնացած-անցած սիստեմի վառ հետքերը կամ վերապրուկները։ Յուրաքանչյուր սիստեմ, որքան էլ նա օրապակաս լինի կամ պոտենցիալ, գենետիկ հարաբերության մեջ է գտնվում հետևյալի հետ»,[1] ընդ որում «հին սիստեմի որոշ նշաններ անցնում են նորին իբրև նմանապես նոր սիստեմի ակտուալ նշաններ, և ոչ միմիայն վերապրուկներ»։[2] Ուստի Ն. Յա. Մառը, հետամուտ լինելով, օրինակ, դերանուններին, հաստատում է ոչ միայն I, II դեմքերի գիտակցման պայմանները, այլև սեփականության հասկացության ծագումը՝ սկզբում կոլեկտիվ, ապա՝ մասնավոր։ Սա հնարավոր է պարզել միայն այն պատճառով, որ լեզվաբանական անալիզը կատարվում էր հաշվի առնելով լեզվի զարգացման զանազան նստվածքը։ Շերտ առ շերտ հանելով, հետազոտողը հասնում էր մինչև, իրոք, սկզբնական, նախնադարյան պատկերացումը։ Առանց հաշվի առնելու մտածողության զարգացման ստադիաները և նրանց նշանակությունը հին ձևերը ծածկող նոր ձևերի աճման մեջ, հավանաբար Մառը ևս Մեյեի նման կհանգեր լեզվի երևույթների առանձնահատկությունները անմիջականապես հակապատմականորեն սոցիալական կարգի հետ նույնացնելուն։ Մեյեն, ինչպես քիչ առաջ մենք տեսանք, բոլորին հանձնարարելով ծայրահեղ զգուշություն գործադրել լեզվական և կուլտուր-պատմական երևույթների միջև փոխհարաբերու-

[1] Հաբեթական ժողովածու, Ընտ. երկ. II հ., Ընտ. երկ. IV հ., էջ 61։

[2] Նույն տեղ, էջ 110։

թյան հաստատելու մեջ, ջանում է ցուցադրել սոցիոլոգիական շկոլայի պրակտիկան հնդեվրոպական լեզուների ձևաբանության առանձնահատկությունները պարզաբանելու գործում։ Մեյեն խնդիր է դնում իրեն՝ բացատրել (և բացատրել սոցիոլոգիապես), թե ինչու հնդեվրոպական ընտանիքի լեզուներում անվան կատեգորիան և բայի կատեգորիան հստակորեն տարբերվում են, մինչդեռ այլ ընտանիքների լեզուներում այդ տարբերությունը կամ պակաս հստակ է կամ բոլորովին չի նկատվում։ Պարզվում է՝ այն պատճառով, որ «հնդեվրոպական լեզուն»(indo-européen commun) արիստոկրատիայի լեզուն է, որը նվաճում ու կազմակերպում է նորանոր տերիտորիաներ և գտնվում մշտական գործողության, շարժման մեջ։ Այս մարտաշունչ արիստոկրատիան ամեն երևույթ դիտում է ակտիվ ուժ ցուցաբերելու տեսակետից, գնահատում է գործողության տեսակետից, այսինքն, ըստ երևույթին, իր այս ըմբռնումը արտահայտելու համար և կարիք ունի անունը բայից տարբերելու։[1] Այստեղ տեղին է մտաբերել Ն. Յա. Մառի ցուցումը, որ, ինչպես հայտնի է, հատկապես բացահայտ հնդեվրոպաբանների կողմից մեղադրվել է լեզվական կառուցվածքի առանձնահատկությունները մեխանիկապես անմիջաբար սոցիալ-տնտեսական կարգի հանգեցնելու մեջ։ Այս խոսքերը Մեյեի հասցեին չեն ասված, բայց ուղղակի դիպչում են նրան. «Ձևաբանության զանազան սիստեմների պատկանելը լեզվակերտման զանազան շրջաններին, իհարկե, հենվում է տեխնիկայի, տնտեսության և սոցիալական կառուցվածքի այս կամ այն տիպի վրա ո՛չ թե անմիջականորեն, այլ մտածողության միջնորդությամբ»։[2] Բայց ահա Մեյեն մոռացել է մտածողության մասին, եթե մտածողության սիստեմ չհամարենք առասպելական հնդեվրոպական նվաճող արիստոկրատիայի (որի վերաբերյալ Մեյեն չի կարող ասել թե ո՛րտեղ է նա գործել և ե՛րբ է գործել) հակումը նոր կարգ հաստատելու նվաճված տերիտորիաներում։

Բայց գուցե հնդեվրոպաբանները ավելի են մտահոգված հասարակական իդեոլոգիայի ու բառապաշարի կապերը հաստատելու մեջ։ Այս կապը նրանք արդեն ավելի վստահ կերպով են ընդունում այնքան, որ կարծում են (ճիշտ է խոսքով և այն էլ՝ ենթադրաբար), թե «լեզվի բառապաշարը առավել կամ պակաս ճըշ-

[1] RSL, 29 հ., III պր., էջ 65—66։

[2] Հաբեթական թեորիայի ակտուալ պրոբլեմներն ու հերթական խընդիրները, Ընտ. երկ. III հ., էջ 76։

տությամբ արտացոլում է իր սպասարկած կուլտուրան»,[1] որ «մտածողի հոգեբանությունը հնարավոր է պատկերացնել այն սեմանտիկ փոփոխությունները ուսումնասիրելու հիման վրա, որոնք կան նրա գործադրած լեզվի մեջ»։[2]

Իբրև օրինակ, վերցնենք դարձյալ Մեյեին։ Իր „Niveau social des mots"[3] զեկուցման մեջ նա հաստատում է, որ ընտանեկան հարաբերություններ նշանակող անունները կայուն կերպով պահպանում են իրենց հին նշանակությունը, որի պատճառով pater բառի սկզբնական նշանակությունը «ծնող» (celue que engendre) չէ, այլ «ընտանիքի գլխավոր»։ Ապա նա ասում է, որ ընտանի կենդանիների հունարեն անունները ոչ սեռի, ոչ էլ տարիքի հատկանիշներ չունեն, որ չափով նրանք ցույց են տալիս հարստության ձև։ Ասես ամեն ինչ լավ կլիներ, եթե Մեյեն չպնդեր, որ այդպես է այդ բառերի վաղեմի նշանակությունը։ Չէ՞ որ այդ դեպքում պետք է կարծել, որ ընտանիքը սկզբնական սոցիալական ինստիտուտ է, իսկ հարստության հասկացողությունը և, հետևաբար, նաև գույքային անհավասարությունը նախորդել է կենդանիների ընտանեցմանը։ Սա, իհարկե, այսպես չէ և, հետևաբար, Մեյեի ողջ սոցիոլոգիական հորինվածքը խախտված է։ Իսկ ի՞նչու է այդպես պատահել։ Որովհետև այդ տերմինները դարձյալ ուսումնասիրվել են պատմական իրադրությունից անջատ, առանց մտածողության սիստեմը նկատի ունենալու. կառուցումները ստեղծվել են լեզվական փաստերի հիման վրա, իբրև այդպիսինների։

Սխալ կլիներ կարծել, թե հնդեվրոպաբանությունը իր արդի վիճակում, իրոք, ընդունել է, իբրև շկոլա, լեզվի տվյալները նյութական կուլտուրայի և հասարակական զարգացման պատմության հետ շաղկապելու անհրաժեշտությունը և միայն, առայժմ քիչ փորձված լինելով նման հետազոտություններում, դժվարանում է միանգամից իրականացնելու դրանք։ Սակայն բանն այդպես չէ։ Սոցիոլոգիական հետազոտման, նույնիսկ քիչ առաջ ցուցված, թույլ հատկանիշը այնպիսի հարձակումների առիթ ստեղծեց Մեյեի վրա առանձին լեզվաբանների ու լեզվաբանական խմբերի

[1] Մեյե, Ներած., էջ 72 (ռուս., թարգ. էջ 234)։

[2] Վանդրիես, Լեզ. աշխ. էջ 245 (ֆր.)։ Ճիշտ է, Վանդրիեսը վերապահությամբ ասում է, որ, հավանաբար, այդ ուսումնասիրությունից ոչ մի եզրակացություն չի հաջողվի հանել, որովհետև կհաստատվի, որ դրանք «բոլոր ժողովուրդների ընդհանուր տենդենցներն են, որ հատուկ են առհասարակ մարդկային մտքին»։

[3] Antropologie, XVI հ. № 1—2, էջ 132։

կողմից, որ ի արդարացումն նրա, երևան եկան նրա կողմնակիցների հոդվածները։ Չէ՞ որ ոչ բոլոր լեզվաբաններն են կողմնակից Վանդրիեսի այն կարծիքին, որ «լեզուն լավ ըմբռնելու համար անհրաժեշտ է այն ուսումնասիրել մարդկային ամբողջ գործունեության, մարդու կյանքի հետ կապված»։[1] Կան գիտնականներ, որոնց կասկածելի, վիճելի կամ նույնիսկ միանգամայն անկարելի է թվում լեզվի և կուլտուրայի կապը։ Այսպես, օրինակ, Սեպիրը, թեև հայտարարում է, որ «լեզվական ձևերն ու լեզվի զարգացման պատմական պրոցեսները վերին աստիճանի արժեքավոր են մտածողության հոգեբանության մի քանի առավել բարդ ու դժվարին հարցերը և կյանքում մարդկային ոգու այն զարմանալի, ամենաբարդ շարժումը ճանաչելու և օգտագործելու համար, որ մենք անվանում ենք պատմություն, կամ պրոգրես, կամ էվոլյուցիա»[2] և «որ լեզուն գոյություն չունի կուլտուրայից դուրս, այսինքն սոցիալապես ժառանգված պրակտիկ վարժությունների ու գաղափարների ամբողջությունից դուրս, որոնք բնորոշում են մեր կենսաձևը»,[3] սակայն չի համաձայնում ընդունել, որ գոյություն ունի «իսկական, պատճառական կապակցություն կուլտուրայի ու լեզվի միջև։ Կուլտուրան կարելի է որակել իբրև այն, թե ինչ է անում ու մտածում տվյալ հասարակությունը։ Իսկ լեզուն այն է, ինչպես որ մտածում են։ Դժվար է նշմարել, թե ինչպիսի հատուկ պատճառական կախումներ կարելի է սպասել փորձի ինվենտարի (կուլտուրան՝ իբրև հասարակության կատարած արժեքային ընտրանք) և այն հատուկ եղանակի միջև, որի օգնությամբ հասարակությունն արտահայտում է իր ամեն տեսակ փորձը»։[4] Ուստի նա գտնում է, որ «ավելի լավ կլինի, եթե մենք լեզվի շարժումն ու կուլտուրայի շարժումը համարենք անհամադրելի, փոխադարձաբար չկապակցված պրոցեսներ»։[5] Լեզվի զարգացումը նա համարում է «անտեսանելի ու անդեմ շարժում», որին «հատուկ է որոշ միտական ուղղություն»,[6] ընդ որում այդ «շարժումը բոլորովին կապված չէ բովանդակության փոփոխության հետ, այլ միայն ձևի»։[7] Սեպիրի համար առավելագույն հետաքրքրություն է ներկայաց-

---

[1] Վ ա ն դ ր ի ե ս, հիշ. աշխ., էջ 217 (ռուս. հրատ.)

[2] Ս ե պ ի ր. Լեզու, էջ 3 (անգլ. III—IV)։ Ընդգծումն իմն է՝ Վ. Մ.

[3] Նույն տեղ, էջ 163 (անգլ. 219)։

[4] Նույն տեղ, էջ 171 (անգ. 233)։

[5] Նույն տեղ, էջ 234 (անգլ.)։

[6] Նույն տեղ, էջ 135, 183 (անգլ.)։

[7] Նույն տեղ, էջ 171 (անգլ. 238)։

նում լեզվի ձևը, իսկ սա, պնդում է նա, պետք է ուսումնասիրվի անկախ նրա հետ հարակցվող ֆունկցիաներից։[1] Միայն Սեպիրը չէ այսպես մտածում։ Նույն սոցիոլոգ Մեյեն կրկնում է. «յուրաքանչյուր լեզվաբանական հետազոտություն ելակետ պետք է ունենա ձևը... մտածություններից ելնելով լեզուն բացատրելու ջանքը միայն կհանգի լեզվի բուն սիստեմի քննման ու անդամազատման, որը հենց իրականություն է հանդիսանում լեզվաբանի համար»։[2] Որչափով որ առավելագույն հետաքրքրություն է ներկայացնում լեզվի ձևը, նրա հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, բավական ավելի պակաս՝ շարահյուսությունը, իսկ դրանց կապը հնդեվրոպաբանների համար մնում է հարցականի տակ, Մեյեն հետևողական է իր տեսակետից, երբ հավատացնում է, որ լեզուն բնորոշվում է արտասանությամբ և քերականությամբ։ Այսպես է ասում Մեյեն, այսպես է կրկնում նրա ասածը Վանդրիեսը, որ առաջարկում է լեզվի էությունը պարզելու համար «վերացնել այն ամենը, ինչ զուտ լեզվաբանական չէ լեզվի մեջ և, օրինակ, բովանդակությունը տարբերել իրեն արտահայտող ձևից»։[3] Սա նրան պատկերանում է միանգամայն օրինաչափ, որ չափով նա գտնում է, որ «լեզվի էական ու մնայուն մասերը փոփոխվում են այն սկզբունքների ուժով, որոնց հետ մտածողությունը ոչ մի առնչություն չունի»։[4] Ճիշտ այդպես հասարակական մտածողության ու լեզվի կապը բացասում է Սոսյուրը, որ հարցնում է. «եթե լեզուն քիչ ճշգրիտ ու արժանահավատ տեղեկություններ է տալիս լեզվից օգտվող ժողովրդի բարքերի հաստատությունների մասին, չի՞ կարող արդյոք նա բնորոշել սոցիալական խմբի գեթ մտածողությունը» և պատասխանում է. «այս կամ այն լեզվաբանական խմբի հոգեբանական բնույթը քիչ նշանակություն ունի այնպիսի փաստի համեմատությամբ, ինչպես ձայնավորի անհայտացումն է կամ շեշտի տեղափոխությունը»։[5]

Գերիշխող շկոլան այլանդակվեց—դարձավ ֆորմալիստական դիսցիպլին, որը լեզուն ուսումնասիրում է առավելապես նրա արտաքին կողմից, անջատ այն ամենից, ինչի հետ անխզելիորեն կապված է լեզուն՝ մարդկային հասարակության պատմությունից,

---

1 Սեպիր, Լեզու, էջ 127։
2 RSL, 29 հ., II պր., էջ 60։
3 RSL, 27. հ., II պր., էջ 4։
4 Vendryès. Le langage, էջ 278 (ֆր.)։
5 Saussure, Հիշ. աշխ., էջ 310—312 (ֆր. հրատ.)։

մտածողությունից, կուլտուրայից։ Այստեղից էլ բխում է արդի լեզվաբանության բնորոշ գիծը՝ լեզվական երևույթների ծագման լիակատար անտեսումը, որի ուսումնասիրությունը Սեպիրը սիրալիր կերպով հանձնարարում է, ինչպես և այն ամենը, ինչ «ապացուցելիի սահմաններից դուրս է», թողնել «փիլիսոփաներին և բելետրիստներին»։[1]

Սոսյուրը գնում է նույն ուղիով, հանձնարարելով «աչք փակել այն բանի վրա, թե ինչպես է ստացվել տվյալ լեզվի վիճակը... միայն մի կողմ նետելով անցյալը, կարելի է թափանցել խոսողների գիտակցության մեջ։ Պատմության ներխուժումը միայն կմոլորեցնի նրան (լեզվաբանին)»։[2] Պատմության վտարումը նա առավել ևս ճիշտ է համարում, որովհետև «ընդհանրապես ասած, հարկ չկա իմանալու այն պայմանները, որոնց մեջ զարգացել է լեզուն»։ Դրա վրա չզարմանանք։ Չէ՞ որ Սոսյուրը թեզիս է առաջ քաշում, թե «լեզվաբանության միակ և իսկական առարկան լեզվի ուսումնասիրությունն է, որ դիտվում է ինքնին և իր համար» (la langue envisagée en elle-même et pour lui-même)[3]։ Բայց պետք է կարծել, որ Սոսյուրը շատ օրիգինալ է։ Նրա տեսակետին համաձայն է, ավա՜ղ, նաև Մեյեն՝ սոցիոլոգիական շկոլայի այդ պարագլուխը, որը չի կասկածում, որ «միակ ռեալությունը, որի հետ գործ ունի լեզվաբանը, վավերացված լեզուների համապատասխանություններ են։ Համապատասխանությունները նախադրում են ընդհանուր իրականություն, բայց դա մեզ հայտնի չէ։ Դրա մասին գաղափար կարելի է կազմել միայն անապացուցելի հիպոթեզներով։ Հետևաբար, լեզվական համապատասխանություններն էլ հենց գիտական ուսումնասիրության միակ առարկան են»։[4] Սա ինչով չէ Սոսյուրյան թեզիս, այսինքն՝ „la langue envisagée en elle-même et pour lui-même"։ Ուստի զարմանալի չէ, որ հնդեվրոպական լեզվաբանների մեջ ավելի ու ավելի հաճախ են սկսում ձայներ լսվել ֆորմալիստական ուսումնասիրության դեմ։ Նրանցից մեկը հավաստում է. «Համեմատական քերականության ջանքերն ուղղված էին գլխավորապես դեպի հնչյունաբանությունն ու ձևաբանությունը... սեմանտիկան արհամարհում էին։ Կարելի է նույնիսկ ասել, որ մեծ մասամբ, երբ առաջարկված ստուգաբա-

[1] Sapir, հիշ. աշխ., էջ 165 (անգլ.)։
[2] Saussure, հիշ. աշխ., էջ 117 (ֆր.)։
[3] Նույն տեղ, էջ 317։
[4] Meillet, Introduction, էջ 26։

նությունը անբավարար է, կամ անընդունելի, ապա դա հետևանք է սեմանտիկ տվյալների պակասության, երբ ձևի ու բովանդակության կապը մնում է չպատճառաբանված։[1]

Թերևս ավելորդ կլինի հիշատակել, թե ինչ նշանակություն է տալիս հաբեթաբանությունը հատկապես սեմենտիկային, նրա փոփոխականության օրենքների ուսումնասիրությանը, որը բացահայտում է խոսող կոլեկտիվի մտածողությունը, իսկ դրա միջոցով նաև հասարակական հարաբերությունները։ Լեզվի պալեոնտոլոգիան փոխադրում է «ծանրության կենտրոնը ձևերի ուսումնասիրությունից խոսքերի ուսումնասիրության, առհասարակ բառերի, իբրև հասարակայնության զանազան ստադիալ էպոխաների իդեոլոգիան ուղղակի կրողների վրա, հաշվի առնելով դրանց վերապրուկները»։[2]

Այս առնչությամբ կուզեինք մեջ բերել Ն. Յա. Մառի աշխատություններից գեթ մի օրինակ, թե ինչպես տերմինի վերլուծությունը իրոք օգնում է լույս սփռելու հասարակության պատմության վրա, որ լռության են մատնել գրավոր աղբյուրները։ Վերցնենք Ն. Յա. Մառի մի աշխատությունը, գրված 1907 թ., երբ հնդեվրոպաբանների մեջ այնքան տարակուսանք ու քննադատություն հարուցող պալեոնտոլոգիական մեթոդը դեռևս մշակված չէր, բայց երբ Ն. Յա. Մառը արդեն լեզվաբան-պատմաբան էր և կարողացել էր տերմինի հնչյունական թաղանթի տակ բացահայտել նրա ոչ միայն սոցիալական նշանակությունը, այլև նշանակությունների հերթափոխությունը, իմաստավորել դրանք, բառանյութը վերածել ամբողջական պատմական աղբյուրի։ Խոսքը վերաբերում է «Դարձյալ «չելեբի» բառի մասին» աշխատությանը, որի ենթավերնագիրն է «Առաջավոր Ասիայի պատմության մեջ բուրգ ժողովրդի ունեցած կուլտուրական նշանակության հարցի շուրջը»։[3] Մանրաստույգ կերպով վերլուծելով տերմինը և զուգահեռներ անցկացնելով հայերենում, վրացերենում, սվաներենում, ճաներենում և այլ լեզուներում եղած նույն կամ հարակից բառերի հետ, Ն. Յա. Մառը գալիս է այն եզրակացության, որ «չելեբի», «աստված» բառը տեղական բառ է և ոչ թե փոխառյալ։ Նրա ածանցյալ «չելեբի»-ն զանազան ստադիաներում նշանակում է ոչ

[1] Langenhove, հիշ. աշխ., էջ 31։

[2] Հաբեթական թեորիայի ակտուալ պրոբլեմները և հերթական խնդիրները, Ընտ. երկ. III հ., էջ 66։

[3] ЗВО, XX հ., էջ 93—151։

միայն «աստվածային», այլև մեծատոհմիկ, ականավոր, պարոն, տնատեր, երաժիշտ, պոետ, դրագետ, կիրթ, լուսավորյալ, ազնվազարմ, քաղաքավարի, ազնիվ, շքեղ, պճնասեր և այլն։ Ուստի, ասում է նա, առանց ապացույցների պարզ է, որ «բառի մեջ կա նրան ստեղծող ժողովրդի պատմության մի զգալի մասի նստվածքը, այսինքն [այստեղ պետք է նկատի ունենալ աշխատության թվականը՝ 1907 և համապատասխանորեն գնահատել մեր տեսակետից եղած պակաս հստակությունը սոցիալական կարգի որոշման մեջ] վիճելի բառն ստեղծող ժողովուրդը նախ՝ դավանում էր մի կրոն, որը կապակցվել է հաբեթական աշխարհի հարավային ծայրամասում, սեմական սահմանագլխին. երկրորդ՝ ներկայացնում էր ցայտուն արտահայտված դասային կազմակերպություն ունեցող ժողովրդի տիպ, բաժանվում էր մի քանի, համենայն դեպս երկու դասի՝ ազնվազարմների ու հասարակների. երրորդ՝ այս ազնվազարմների մեջ մի ժամանակ իր նշանակությամբ աչքի էր ընկնում այն՛ աստծու անունով կոչվող տոհմը, որի դավանությունը ժառանգաբար կենտրոնացած էր այդ սրբազան տոհմի շրջանում. չորրորդ՝ դավանության հարակցությամբ դրագիտությունը, երգն ու երաժշտությունը կազմում էին նույն ականավոր տոհմի արտոնությունը. հինգերորդ՝ ամեն տեսակետից նման դիրքը ժողովրդի մեջ աստիճանաբար ստեղծում էր... բացառիկ հռչակավորության փառք, իսկ նրա արմատապես դավանական և առհասարակ թեոլոգիական անվան տալիս էր դասային, ընդհանրապես սոցիալական տերմինի և բոլոր բարձր գաղափարների նշանակություն, որոնք ամենուրեք կապվում են նշանավոր դասի հետ. վեցերորդ՝ այն ժողովուրդը, որի խորքում ծավալվում էր այս պատմությունը գրքային աղբյուրների հասանելիությունից դուրս, XIV դարում ամբողջովին ձուլվեց թուրք-սելջուկների հետ, որոնց լեզվի մեջ և՛ մտցրեց «չելեբը» և «չելեբի» երկու բառերը՝ մշակված նախընթաց ազգային հազարամյա երկար պատմությամբ»։

35-ամյա վաղեմություն ունեցող աշխատությունից բերած այս օրինակը վկայում է, որ տակավին այն ժամանակ էլ Ն. Յա. Մառը շատ ավելի էական արդյունքներ ձեռք բերեց բառանյութը վերլուծելիս, քան մենք այդ տեսնում ենք հնդեվրոպաբանության մեր ժամանակակից փորձերի մեջ։ Դրան նա հասավ այն պատճառով, որ նա դուրս էր գալիս մեկ լեզվաընտանիքի սահմաններից, իրեն հետաքրքրող տերմինը նա վերցնում էր հաշվի առնելով նյութական կուլտուրայի և կենդանի կենցաղի պատմությունը,

նկատի ունենալով տերմինի ոչ թե միայն ձևը, այլև նշանակությունը, ոչ թե կայուն, այլ փոփոխական նշանակությունը պատմական պրոցեսի ու հասարակական մտածողության զարգացումից ունեցած կախումով։ Լեզվի ուսումնասիրությունը արդարացում է ստանում միայն այն ժամանակ, երբ դա բացահայտում է լեզուն ստեղծող մարդկային հասարակության պատմությունը, այլ կերպ պետք է ընդունել սոսյուրյան թեզիսը՝ լեզվի ուսումնասիրությունը ինքնին ու իր համար, իսկ այդ նշանակում է լեզվաբանությունը վերածել լեշի, այսինքն՝ հարցականի տակ դնել լեզվաբանության բուն իսկ գոյությունն իբրև հասարակական գիտության։ Սա հասկանում են նաև առավել առաջադեմ հնդեվրոպաբանները, որոնցից մեկը դառնությամբ հարց է տալիս. «Լեզվի փաստերը, իբրև կուլտուրայի մակարդակի անդրադարձում և իբրև լեզվական կոլեկտիվի սոցիալական կառուցվածքի արժեքավոր վկայություն, մեկնաբանելու հնարավորության նկատմամբ կասկածը չի՞ վերացնում, արդյոք, սահմանված լեզվական համապատասխանությունների ամեն մի նշանակությունը, մեթոդի անբավարարության խոստովանություն չէ՞ և հարցականի տակ չի՞ դնում արդյոք, մեր գիտության բուն իսկ նշանակությունը»։[1] Նա ճիշտ է շոշափում ցավոտ տեղը. ոչ թե նյութերի ու գիտելիքների պակասությունը, այլ մեթոդն է կանխորոշում հնդեվրոպաբանության անկարողությունը՝ դառնալու պատմական, հասարակագիտական գիտություն, Իզուր չէ, որ Վանդրիեսը՝ թերևս մեկը նրանցից, ովքեր սկեպտիկորեն են տրամադրված դեպի հենց իրենց կիրառած մեթոդը, ասում է. «Ինքն իրեն թողնված համեմատական մեթոդը երբեմն անզորունակ է։ Այն ենթադրում է, որ լեզուների զարգացումը ընթացել է ճիշտ և հետևողական ճանապարհով... Թեև այն պատմական հետազոտության շարունակությունն է, սակայն այն (համեմատական մեթոդը) անտեսում է պատմությունը, որովհետև օգտագործում է միայն թեորիական տվյալները, պատմական պրոցեսը վերցնելով գռեհկացրած, հասցված պատահարի ու հետևանքների կանոնավոր հաջորդականության, զուրկ այն ամենից, ինչ կազմում է պատմական պրոցեսի իսկական էությունը՝ բարդությունն ու բազմազանությունը։ Կարելի է ասել, որ դրանում համեմատական մեթոդը ենթարկվում է ճակատագրական անխուսափելիության. իր տեսադաշտից դուրս թողնելով այն քաղաքական ու սոցիալական պայմանները, որոնց մեջ զարգացել է լեզուն,

[1] Langenhove, հիշ. աշխ., էջ 22—23։

լեզվի նախապատմությունը վերականգնում է լեզվաբանական միջոցներով։[1] Վանդրիեսի համար բոլորովին անվիճելի է դառնում պատմական հարցերի լուծման այս անկարողությունը, երբ գործը վերաբերում է անգիր լեզուներին կամ անգիր էպոխաներին։ «Այն ժամանակ մենք զո՛հ ենք հուշարձանների բացակայության, զո՛հ ենք նմանապես և մեր մեթոդին, որ արգելք է հանդիսանում մեզ օգնության դիմելու մյուս գիտություններին, որպեսզի լրացնենք լեզվաբանության դոկումենտացիայի բացը»։[2]

Վանդրիեսը արդեն միանգամայն անելանելի է համարում դրությունը, երբ գործը վերաբերում է համեմատական մեթոդը հասարակական գիտությունների մյուս բնագավառների նկատմամբ կիրառելուն։ Իր ուսուցիչ Մեյեի „Les origines indo-européennes des mètres grecs" աշխատության առթիվ գրած գրախոսականում Վանդրիեսը ասում է. «Համեմատական մեթոդը այդ նոր նյութի վերաբերմամբ կարող է կիրառվել միայն փոփոխվելով։ Հարկ չկա հիշեցնելու, թե որքան այն, ինչ կոչվում է համեմատական միֆոլոգիա, փիլիսոփայություն կամ գրականություն, ընդհանուր քիչ բան ունի համեմատական լեզվաբանության հետ։ Խոսքերով չխաբենք մեզ և բոլոր այդ դիսցիպլինները չհամարենք ուսումնասիրության ընդհանուր առարկա։ Այն գիրքը, որի մեջ Մեյեն հիմք է դնում մետրիկայի համեմատական ուսումնասիրության, միաժամանակ ցույց է տալիս համեմատական մեթոդի թե՛ հատկությունները և թե՛ նրա կիրառման սահմանափակությունը»։[3] Պարզվում է, որ սոցիոլոգ Վանդրիեսի համար լեզվի պատմության, գրականության պատմության, կրոնի պատմության ուսումնասիրման առարկաները տարբեր են, այսինքն՝ դա, ըստ երևույթին, լեզուն է, գրականությունը, կրոնը, իբրև այդպիսիները, և ոչ թե հասարակության իդեոլոգիայի արտացոլումը, որի ուսումնասիրությունը հետաքրքրություն պետք է ներկայացնի Վանդրիեսի համար, քանի որ նա ազդարարում է, թե «լեզուն գերազանցապես սոցիալական երևույթ է»,[4] քանի որ Մեյեն հաստատում է, որ «չկա մարդկային ոգու մի այլ արտահայտություն, որտեղ այնքան լրիվ, այնքան նուրբ և այնքան բազմազան կերպով արտահայտվի մարդու ողջ գործունեությունը»։[5] Ճիշտ է, պետք է նշմարել

[1] Լեզու, էջ 278 (ռուս.)։

[2] Լեզու, էջ 360 (ռուս. 282)։

[3] RSL, 24 հ., II պր., էջ 50։

[4] Vendryès, հիշ. աշխ., էջ 13 (ռուս. 204)։

[5] Մ ե յ ե, Ներածություն, էջ 32 (ռուս., Փր. 18)։

խոստովանել, որ Մեյեն աչք չի փակում այն բանի վրա, որ հնդեվրոպաբանների աշխատություններում լեզուն՝ «մարդու կյանքի արտացոլումը, նրա ոգու արտահայտությունը» ներկայացված է մի փոքր անկենդան։ Չէ՞ որ նա հարկադրված է խոստովանելու, որ պետք է վերցնել հնդեվրոպական յուրաքանչյուր տիպի լեզուների ուսումնասիրությունը, պարզացված սխեմաները, որոնց չափազանց ի չարն են գործադրել, փոխարինելով բազմազանությամբ ու երանգներով (nuances,) որոնք, իրոք, գոյություն ունեն։[1] Եվ ի՞նչպես նա չընդունի այդ, երբ հնդեվրոպաբանների մեջ ավելի ու ավելի բարձր են լսվում այն ձայները, որոնք նշում են լեզվաբանների աշխատանքի միակողմանի ու շատ անբավարար արդյունքները։ Օրինակ, սահմանելով «լեզուների մեծ մասի, առանձնապես համաշխարհային նշանակություն ունեցող լեզուների հնչյունաբանական և ձևաբանական ճշգրիտ ու հստակ հարաբերակցությունը, թեկուզ և շարահյուսության ու իմաստաբանության ուսումնասիրությամբ բացահայտորեն հետ մնալով հանդերձ, լեզվաբանները չափազանց հաճախ մոռանում էին, որ այնքան ուշադիր գրանցված փաստերը գոյություն չունեն ինքնին, որ նրանք միայն հատկանիշներ են, որոնք արտացոլում են գաղափարներ։ Թատի, դժբախտաբար, անտեսել են նրանց օգտագործումը, իբրև կուլտուրայի տարրերի, որոնք հասարակության սոցիոլոգիական ուսումնասիրության, մանավորապես կուլտուրայի և իդեոլոգիայի (comparement intellectuel) ուսումնասիրության համար ավելի արժեքավոր վկայություններ են տալիս, որ նրանք մարդու կամքից անկախ են (indépendants de l'arbitraire de l'homme)»։[2]

Կարծես թե իրավացի է Ն. Յա. Մառը, երբ նա չքննելով հնդեվրոպաբանի քիչ առաջ հիշատակված ինքնագնահատությունը, գրում էր. «բուն հնդեվրոպաբանների, այսինքն՝ հին շկոլայի մասնագետների շրջանում առաջացան, քիչ է ասել՝ տարակույսներ իրենց ընդունած վաղեմի ժամանակից սրբագործված հետազոտական ուղղության ճշտության վերաբերմամբ։ Այս բեկումնավոր հնդեվրոպաբանների քննադատությունը անցավ առողջ ինքնաքննադատության սահմաններից, դառնալով ողբանկերուկ, որը նշանակում է լեզվի այսպես կոչված հնդեվրոպական ուսմունքի ներքին քայքայումը։[3]

---

[1] RSL, 26 հ., III պր., էջ 39։

[2] Langenhove, նշվ. աշխ., էջ 23—24։

[3] Մայրենի լեզուն՝ կուլտուրական վերելքի հզոր լծակ։ Ընտ. երկ. V հ., էջ 434։

Իսկ հետագա աշխատանքի ի՞նչպիսի հեռանկարներ են խոստանում հնդեվրոպաբան լեզվաբանների պարագլուխներն իրենց հնազանդ և հնազանդությունից դուրս եկող հետևորդներին։

Նախ նրանք ընդունում են, որ «դեռ այսօր էլ լեզվաբանության հիմնական պրոբլեմները սպասում են լուծման» (Սոսյուր),[1] որ հետագայում կարելի է միայն «ճշտել արդեն ձեռք բերված արդյունքների մանրամասնությունը, բայց և սրա համար էլ պահանջվում է տևական աշխատանք... որովհետև համարյա չկա մի հարց, որ կարելի լինի համարել լիովին պարզված» (Մեյե),[2] և, երրորդ, որ «մեր գիտելիքների արդի վիճակում մենք կարող ենք միայն որոշել այն նորմուծությունները, որ հատուկ են յուրաքանչյուր առանձին հնդեվրոպական լեզվի, առանց հավակնելու այդ փոփոխությունների պատճառների ճիշտ պարզելուն» (Մեյե)։[3] Համառ ու կրկնական հայտարարությունների պատասխանն այս է. «մեր մեթոդը հաստատապես կարիք ունի բարելավման» (Hermann. Unsere Methode bedarf dringend der Verbesserung)։[4] Եվ Ն. Յա. Մառը հավաստում է, որ «անցյալի իր բոլոր երախտիքներով ու նվաճումներով, որոնք այժմ էլ լուրջ ուշադրության են պահանջում լեզվի նոր ուսմունքից, բուն հնդեվրոպաբանությունը, իբրև մի ուսմունք կամ թեորիա, որ կառուցված է բացառապես անբավարար լեզվական նյութի հաշվառման վրա, ներկայումս ոչ միայն առելիք չունի, այլև անելիք չունի»։[5]

Սակայն սա ոչ մի հիմք չի տալիս հաստատելու, ինչպես անում են Ն. Յա. Մառի չափից դուրս կրակոտ աշակերտներից ոմանք (ավելի ճիշտ թյուրիմացաբար իրենց այդպես անվանողները), որ հարկ չկա հաշվի նստելու հնդեվրոպական լեզվաբանության հետ, որ կարելի է, թերևս, և պետք է ամբողջովին անտեսել նրան։ Նման պրիմիտիվիզմը ընդհանուր ոչինչ չունի Ն. Յա. Մառի իսկական վերաբերմունքի հետ դեպի հնդեվրոպական լեզվաբանությունը։ Վերջինիս մեթոդներն ու տրադիցիաները ներկայումս արգելք համարելով լեզվաբանության զարգացման համար, նա ոչ միայն հարգում էր հնդեվրոպական լեզվաբանների գիտելիքներն ու արժանիքները, այլև զգաստ գնահատության էր են-

---

1 Saussure, հիշ. աշխ., էջ 16 (ֆր.)։

2 Մեյե, Ներածություն, էջ 468 (ռուս., ֆր. 442)։

3 Նույն տեղ, էջ 442 (ֆր.)։

4 Hermann, Lautgesetz und Analogie, էջ 6։

5 Հաբեթաբանությունը ԼեՆ. Պետ. Համ., Ընտ. երկ., I հ., էջ 161—262։

թարկում համեմատական լեզվաբանության իր ժամանակի համար առաջադիմական նշանակությունը։ Գռեհկացնելով հնդեվրոպաբանության դասակարգային էության հարցերը և հավասարության նշան չդնելով կապիտալիստական հասարակության իդեոլոգիական պատկերացումների սիստեմում գիտության ունեցած դերի և առանձին գիտնականների սուբյեկտիվ մտադրությունների ու ձգտումների միջև, նկատենք, որ իրավացի է Ն. Յա. Մառը, երբ նա ուշադրություն է դարձնում այն բացառիկ տեղի վրա, որ համեմատական լեզվաբանության մեջ նրա զարգացման բոլոր էտապներում հատկացված է հնդեվրոպական լեզուներին, առանձնապես անցյալի ու ներկայի մեծ ժողովուրդների լեզուներին, և այն համեստ տեղին, որ հատկացված է ուրիշ սիստեմի լեզուներին, մանավանդ եթե դրանք ազգային փոքրամասնությունների կամ գաղութային ժողովուրդների լեզուներն են։ Մենք արդեն լսեցինք Մեյեի կարծիքը, որ հնդեվրոպական լեզուները «ամենակարևորն»[1] են, որ «ավելի պակաս հավասարություն գոյություն ունի լեզուների միջև, քան ժողովուրդների. ընդհանուր չափանիշ չկա գնահատելու համար ֆրանսերեն լեզվի և բրետոնական կամ բասկերեն լեզուների մտավոր ու սոցիալական նշանակությունը»։[2] Մեյեն կանգ չի առնում այն պատճառների պարզաբանման վրա, որոնցով տեղի է ունեցել այդ. նա ուղղակի հավաստում է փաստը իբրև միանգամայն բնական ու անխուսափելի երևույթ։ Բայց անարդարացի չլինենք Մեյեի հանդեպ. նա մենակ չէ այդպես մտածում։ Վանդրիեսը պարզաբանում է նրանց ընդհանուր միտքը. «Դիցուք,—ասում է նա,— բրետոնացին ցանկանա փիլիսոփայության մասին տրակտատ գրել բրետոներեն. անշուշտ դա նրան կհաջողվի։ Դժբախտաբար, բրետոնացիները, գոնե միայն բրետոներեն խոսողները, ամենևին չեն հետաքրքրվում փիլիսոփայական հարցերով, բայց և փիլիսոփաներն էլ սովորաբար չեն հասկանում բրետոներեն։ Մեր բրետոնացուն, թերևս, չկարդան և չհասկանան։ Լեզվի նշանակությունը կապ ունի նրանից օգտվողների թվի և կուլտուրայի աստիճանի հետ։ Ահա թե ինչու կելտական լեզուները պակաս նշանակություն ունեն, քան ռոմանականներն ու գերմանականները»։[3]

---

[1] Meillet, Introduction, էջ 434 (ֆր.)։ Հմմտ. IX էջը—«հնդեվրոպական լեզվաբանությունը ամենալավ ուսումնասիրվածն է և, բացի դրանից, ամենակարևորն է»։

[2] Meillet, Les langues dans l'Europe nouvelle, էջ XII։

[3] Vendryès, Le langage, էջ 417 (ռուս. 312)։

Կարդալով սոցիոլոգ լեզվաբանների այս հայտարարությունները, հիշում ես Ն. Յա. Մառի գրածը 1909 թ. «դրանի դեռ համաշխարհային իրադարձությունների պատմաբանները համառորեն կանգնած են նախասիրած ժողովուրդների պատմություն կերտելու արտոնության տեսակետին... հետազոտման նոր ուղիների ամեն մի ծրագրային ճառ հանդիսանում է մեթոդոլոգիական ճարտասանություն»:[1]

Չխորանանք նաև այն հարցում, թե ինչու միայն բրետոներեն խոսող բրետոնացիները չեն հետաքրքրվում փիլիսոփայական հարցերով, կամ ավելի ճիշտ՝ թե ի՞նչու նրանք առիթ չունեն հետաքրքրվելու փիլիսոփայական հարցերով, և ի՞նչու մոտ անցյալում գիր ու գրականություն չունեցող որոշ ժողովուրդներ ՍՍՌՄ-ում ոչ միայն հետաքրքրվում են այժմ փիլիսոփայության հարցերով, այլև փիլիսոփայական աշխատություններ են գրում մայրենի լեզվով և ընթերցողներ ունեն: Ի պատասխան բերենք Ն. Յա. Մառի խոսքերը. «լեզվի բարբարոսության և մեր դարի լուսավորության կրողը լինելու նրա անկարողության մասին բոլոր խոսակցությունները լուրջ քննադատության չեն դիմանում, և եթե նրանք որևէ բանի մասին վկայում են, ապա վկայում են այդպես արտահայտվողների մակերեսային իրազեկության մասին բրետոնական կամ այդ կարգի հարցերում, որչափով նրանք անկեղծ են խոսում»:[2]

Պարզվում է, որ այս հարցում, թեկուզ և միայն լեզվաբանության համար եվրոպական պետությունների ազգային փոքրամասնությունների և գաղութային ժողովուրդների լեզուների նշանակության հարցում, փոքրամասնություններ ու ժողովուրդներ, որոնք իբրև թե պատմության բնական ընթացքով դատապարտված են բնաջնջման, հաբեթական թեորիան ու հնդեվրոպաբանությունը կանգնած են տրամագծորեն հակադիր դիրքերում: Ն. Յա. Մառը սովետական պետության ազգային քաղաքականությանը կատարելապես համապատասխան և հիմնված լեզվի անցյալ պատմության ու նրա զարգացման տենդենցների վրա հաստատում է, որ «մայրենի լեզուն կուլտուրական վերելքի հզոր լծակ է», ընդ որում ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա-

[1] Անտիոք Ստրատիգ, Երուսաղեմի գերումը պարսիկների կողմից, IX գիրք, էջ 8:

[2] Բրետոնական ազգ. փոքր. լեզուն Աֆրիկաքիայի լեզուների կապակցությամբ, Ընտ. երկ. IV հ., էջ 205:

չի թեզիսը նրա աշխատություններում հիմնավորում է, գտնում լեզվի և մտածողության պատմության կոնկրետ նյութով։ Իսկ սոցիոլոգիական շկոլայի գլուխ Մեյեն իր բոլոր աշխատություններում այն միտքն է պաշտպանում, որ տեղական բարբառները ոչ մի կերպ չեն կարող մրցել մեծ լեզուների հետ։ Նրանք չքավոր ազգականներ են, որոնք հաջողություն չեն ունեցել կյանքում»։[1]

Սրանից, իհարկե, չի հետևում, որ հնդեվրոպաբանները իրենց հետազոտություններից ամբողջովին վտարել են ազգային փոքրամասնությունների և գաղութային ժողովուրդների լեզուները։ Հայտնի են նրանց արժեքավոր աշխատանքները այդ ասպարեզում, բայց նման աշխատանքների նպատակն է ոչ թե այդ լեզուների հետագա զարգացումն ու դրանցով խոսող լեզուների ազգային ինքնագիտակցության վերելքը, այլ նրանք խնդիր են դնում իրենց՝ սոսկ հարստացնել գիտությունը նոր փաստերով, և Մեյեն բազմիցս ընդգծում է այդ հանգամանքը, ընդ որում նա չի թաքցնում իր խիստ բացասական վերաբերմունքը ամեն տեսակի, նույնիսկ ամենահամեստ փորձերի նկատմամբ, որոնք աշխատում են դարձնել այդ լեզուները իրենց ստեղծողների լուսավորության գործիք։ «Այն լեզուն, որին շոշափել է դպրոցը և որից հավակնություն ունեն ստեղծելու ժամանակակից նույնիսկ ամենահամեստ քաղաքակրթության համար պիտանի գործիք, անմիջապես կորցնում է իր հետաքրքրության մեծ մասը գիտնականների համար[2],— ասում է նա։ «Բարբառները հետաքրքրական են գիտնականի համար միայն նրանց անմիջականության պատճառով, իսկ որչափով նրանք կդասավանդվեն դպրոցում, մեզ համար կկորցնեն իրենց ամբողջ նշանակությունը»։[3] Եվ որքան տարբեր կերպով է նայում այդ հարցին հաբեթական թեորիան. «Զանազան ազգության այլալեզու զանգվածների գրագիտության հարցը հսկայական կարևորություն ունեցող գործ է ոչ միայն հասարակայնության, այլև գիտության համար»։[4] Ինչո՞ւ. Որովհետև «իր ծագման իմացությունը, ոչ միայն իր ֆիզիկական տեսակի, այլև առաջին հերթին իր հասարակական կեցության, մարդու կողմից ստեղծած նյութական և սոցիալական-

[1] Meillet, Les langues dans l'Europe nouvelle, էջ 185։

[2] RSL, 29 հ. II պր., էջ 249։

[3] Նույն տեղ, 28 հ. I պր. էջ 34—35։

[4] Աբխազերեն վերլուծական այբուբենը, Ընտ. երկ. II հ., էջ 325։

իր կուլտուրայի... իր լեզվի ծագման... Հենց այս բոլորի իմացությունը ազատագրում է մարդկությունը»։[1]

Ավելորդ կլինի ասել, որ ռասայական թեորիան իր ոչ միայն ֆաշիստական մոլեռանդ ձևով, այլև առաջին հայացքից ավելի անմեղ կերպարանքով սկզբունքային և մոլեգին հակառակորդ գտավ հանձին հաբեթական թեորիայի։ Դեռևս իր վաղ շրջանի աշխատություններում Ն. Յա. Մառը պայքարում էր կուլտուրայի և լեզվի տարբերությունները բնածին և ոչ թե պատմականորեն ձևավորված պատճառներին վերագրելու մտայնության դեմ, ռասայական թեորիան անվանելով «միջնադարյան մտածողության մնացուկ»։ Նա ասում է. «ցեղի և ազգի մաքրությունը, արյան մաքրությունը իդեալիստական պատրանք է, մեկուսացած լինել ցանկացող դասակարգերի, իշխանությունը զավթողների հազարամյա տիրապետության արդյունք։ Մեկուսի ռասայական կուլտուրաներ չկան այնպես, ինչպես չկան ռասայական լեզուներ»։[2]

Հնդեվրոպական շկոլան բացատում է ռասայի և կուլտուրայի, ռասայի և լեզվի կապը։ Ժամանակակից հնդեվրոպաբանները, իհարկե, հեռու են այն պնդումներից, որ մենք կարդում ենք, օրինակ, Ռենանի մոտ. «Յուրաքանչյուր լեզվաընտանիք առանց տատանումների ու ջանքերի բխել է յուրաքանչյուր ռասայի ոգուց»։[3] Ոչ որ բացահայտորեն չի ասում, բացի նույն Ռենանից, որ «մինչդեռ ազնվազարմ ռասաները բարձրանում են մինչև կուլտուրայի գագաթը, ստորին ռասաները կանգ են առել ներքև, հովիտներում, որտեղ գտնվում է մարդկության օրրանը... կատարելագործման չենթարկվող ժողովուրդները գտնվում են հավիտենական մանկության մեջ, ասես իբրև վկաներ այն բանի, ինչ կար մարդկության առաջին օրերին»։[4] Ընդհակառակը, այժմ բոլորն են համաձայն այն բանին, որ «ռասայի և լեզվի սահմանները երբեք ճշտորեն չեն զուգադիպում»,[5] որ «կարելի է պատկանել զանազան ռասաների և խոսել մի լեզվով, կամ խոսել զանազան լեզուներով

---

1 Ազգային փոքրամասնության ուսումնասիրության նշանակությունն ու դերը գավառագիտության մեջ. Ընտ. երկ. I հ., էջ 232։

2 Ազգային փոքրամասնության ուսումնասիրության նշանակությունն ու դերը գավառագիտության մեջ. Ընտ. երկեր I հ., էջ 241։

3 Renan, L'origine du langage, էջ 94։

4 Նույն տեղ, էջ 67։

5 Meillet, Les langues dans l'Europe nouvelle, էջ 79։

և օգտագործել միևնույն անոթը։[1] Ճիշտ է, այս խոսքերով չի ժխտվում լեզվի ու ռասայի կապի բուն իսկ սկզբունքը, այլ միայն հավասարվում է առկա լեզուներում լեզվական, անտրոպոլոգիական և կուլտուր-պատմական առանձնահատկությունների չզուգադիպման փաստը։ Բայց բանը խոսքերը չեն, այլ փաստերը։ Իսկ փաստերն այն են, որ որչափով բոլոր հնդեվրոպաբանները ընդունում են նախալեզուն, որից իբր հետագա զարգացման կարգով ծագում է առանձին լեզվաընտանիքը, լեզուներն ու բարբառները, ընդունում են նաև լեզվական սիստեմների ներփակվածությունը և խոսում են այս կամ այն ժողովրդի ու լեզվի տիպի էթնիկական ցեղային մաքրության մասին, ապա իրոք լեզվի ռասայական ծագման նրանց բացասումը կատարվում է սոսկ խոսքերով։ Հիբավի, Սոսյուրը ուղղակի ասում է. «Այն փաստը, որ հնդեվրոպական լեզուները կազմում են մի ընտանիք, առիպում է մեզ ենթադրելու այն սկզբնական էթնիկական միասնության մասին, որ ժառանգաբար հաղորդվել է ներկայումս այդ լեզուներով խոսող բոլոր ժողովուրդներին»։[2]

Մեյեն համառորեն ժխտում է հնդեվրոպական ռասայի գոյությունը, բայց ընդունում է հնդեվրոպական ժողովուրդ, ավելի ճիշտ՝ նախաժողովուրդ. «լեզուն այնքան միասնական է, ինչպես այն, որ սահմանվում է վավերացված լեզուների միջև եղած համապատասխանություններով, ենթադրում է բավական երկար ժամանակամիջոցում մի ժողովրդի գոյություն, որը որոշակի միասնություն է ներկայացնում... Ոչ մի բան իրավունք չի տալիս խոսելու հնդեվրոպական ռասայի մասին, բայց անկասկած գոյություն է ունեցել հնդեվրոպական ժողովուրդ, անհայտ է՝ որոշակի ո՛րտեղ և ե՛րբ»։[3] Իսկ Ն. Յա. Մառը պնդում է, որ «ֆիննական, իրանական, թուրքական միասնական ցեղային բնույթին և միաբնությամբ նրա ստեղծած կուլտուրան չի կարող գոյություն ունենալ, ինչպես գոյություն չունի նման հնդեվրոպական ցեղային կուլտուրա»։[4] Բայց ահա, երբ Մեյեն սկսում է խոսել այդ հնդեվրոպական ժողովրդի կամ նախաժողովրդի մասին, անմիջապես սկսում ես կասկածել, որ «ժողովուրդ» անվան տակ, որպես դի-

[1] Vendryés, La langage, էջ 359 (ռուս. էջ 278)։

[2] Saussure, Հիշ. աշխ., էջ 306։

[3] Meillet, Introduction, էջ 405 (ֆր.)։

[4] Եվրոպայի նախապատմական բնակչության վերապրուկներից, տոհմական կամ դասակարգային, ռուսական լեզվի և տոպոնիմիկայի մեջ, Ընտ. երկ. V հ., էջ 314։

մակի, թարգմնված է ռուսաց 1928 թ. փետրվարի 18-ին Société de linguistique-ի նիստում Մեյեն հանդես եկավ մի հաղորդումով, թե՝ լիակատար համապատասխանություն գոյություն ունի հնդեվրոպական ժողովրդի սոցիալական կարգի և համահնդեվրոպական լեզվի, ուղղակի ասենք՝ նախալեզվի կառուցվածքի միջև։ Մեյեն հաստատում է, որ համահնդեվրոպական լեզվի մեջ կան մեծ քանակությամբ անոմալիաներ, որոնք այնուամենայնիվ զետեղվում են խիստ և հստակորեն որոշակի կատեգորիաների մեջ, իսկ, օրինակ, թուրքերենում նման անոմալիաներն ու ինքնուրույն լեզվաբանական ձևերը չափազանց քիչ են։ Ի՞նչու։ Որովհետև հնդեվրոպական արիստոկրատիայի համար բնորոշ է նոր տերիտորիաներ նվաճելու և ենթարկելու ձգտումը, որտեղ յուրաքանչյուր առաջնորդ ուզում է միանգամայն անկախ լինել, որտեղ նա ձգտում է տեր լինել (բայց, ըստ երևույթին, այդ դեպքում նա դուրս չի գալիս թույլատրված ինքնուրույնության սահմաններից)։ Եվ սա պատմությու՞ն է։ Եվ սա մաքուր գիտությու՞ն է քաղաքականությունից դուրս, ինչպես այդ պնդում է Մեյեն, հաբեթական թեորիան կշտամբելով գիտությունը քաղաքականության հետ խառնելու գիտական աշխատանքի համար կործանարար մտայնության մեջ։ Ն. Յա. Մառը առարկում է. հնդեվրոպաբանների աշխատություններում նույնպես քաղաքականություն կա, բայց կեղտոտ քաղաքականություն։ Այս հնդեվրոպական ժողովրդից կամ հնդեվրոպական նախաժողովրդից շատ ուղիղ ճանապարհ է ձգվում դեպի բարձրագույն արիական ռասան։ Եվ ի՞նչ ժողովրդի, ի՞նչ ազգի մասին կարելի է խոսել այն էպոխաներում, երբ կազմվում էին հնդեվրոպական լեզուները։

Հնդեվրոպաբաններին առհասարակ ոչ մի կերպ չի հաջողվում հաղթահարել ազգության հարցը։ Իր բնույթով լինելով հակապատմական, հնդեվրոպական շկոլան ոչ մի կերպ չի կարողանում ազգությունը՝ այդ պատմական կատեգորիան տեղավորել ժամանակի, տարածության, պատմական իրադրության մեջ։ Բացի դրանից, համարյա ամեն մի լեզվաբան յուրովի է որոշում, թե ի՛նչ է ազգությունը և երբեմն հասնում է կուրյոզների։ Սեպիրը կարծում է, որ «ազգությունը ընդարձակ միավորում է նախ և առաջ ըստ էմոցիոնալ հատկանիշների»,[1] իսկ Սոսյուրը կարծում է, որ «ազգությունը առավելագույն չափով բնորոշվում է լեզվով»։[2] Մեյեն

[1] Sapir, Language, էջ 227, ծան. 1։

[2] Saussure, Cours de l'inguistique générale, էջ 40։

հաստատում է, որ «ազգությունը կապված չէ որևէ նյութական թաղայի (soutien matériel), նույնիսկ լեզվի հետ։ Ազգության պատկանելությունը զգացմունքի ու ցանկության բան է։ Բայց և այնպես լեզուն առաջին ամենացայտուն ու ամենից ակներև նշանն է, որով տարբերվում է ազգը»։[1] Ճշմարտությանն ամենից մոտիկ է, ինչպես նրա հետ հաճախ է պատահում, Վանդրիեսը, որը, ինչպես միշտ, զգուշությամբ այն ենթադրությունն է անում, որ «ազգային առանձնահատկությունները այնպես, ինչպես և լեզուները, ըստ երևույթին, հետևանք են և ոչ թե պատճառ»։[2] Իսկ Ն. Յա. Մառը դեռևս 1918 թ. հիշեցնում էր, որ «չէր խանգարի իմանալ, որ ազգությունը ոչ մի իմաստով սկիզբ չէ և ոչ էլ նպատակ, այլ մի էտապ, անցումային աստիճան մարդկության զարգացման մեջ»։[3]

Հակառակ հնդեվրոպաբանության, որը, ինչպես մենք տեսանք, իր հետազոտությունները սահմանափակում է ուսումնասիրելով «լեզվաբանության միակ ռեալ օբյեկտը՝ արդեն կազմված լեզվի նորմալ ու կանոնավոր կյանքը»,[4] հաբեթական թեորիան հետաքրքրվում է լեզվի կազմավորումով, նրա ծագումով այնչափ, որչափ նա հետաքրքրվում է կազմավորված լեզվի կյանքով. «առանց լեզվի ծագմամբ հետաքրքրվելու որևէ լեզվաբանություն չի կարող լինել. լեզվի ամեն մի ուսմունք ենթադրում է այս կամ այն դրական վերաբերմունքը այս հարցին, լեզվի ծագման այս կամ այն կոնցեպցիայի, և միայն այն ժամանակ առանձին լեզուներով հատուկ խորացած զբաղմունքները կարող են արդյունավետ լինել։ Եվ որքան ճիշտ է դրված և, իհարկե, որքան ավելի ու լավ է լուսաբանված լեզվի ծագման հարցը, այնքան ավելի արդյունավետ ու առհասարակ բովանդակալից է դառնում լեզվի ուսմունքը, նմանապես և լեզուների փոխհարաբերության վերաբերյալ ընդհանուր պատկերացումը»։[5]

---

1 Meillet, Les langues dans l'Europe nouvelle, էջ 78։

2 Vendryés, հիշ. աշխ., էջ 217 (ռուս. 218)։

3 Կովկասի ազգաբնակության ցեղային կազմը, КИПС-ի աշխատություններ, II պր., էջ 27, ծան.։

4 Vendryés, հիշ. աշխ., էջ 105։

5 Հաբեթական թեորիա, Ընտ. երկ II հ., էջ 69։ Համմ. Լեզուն և արդիականությունը, Известия ГАИМК, 60 պր., էջ 7. «Այն լեզվաբանը, որ երես է դարձնում լեզվի ծագման պրոբլեմը զննելուց իբրև առաջին հերթի իր գործը թեորիական աշխատանքի մեջ, դրանով իսկ իրեն հանում է լեզվաբանների շարքից»։

Իսկ հնդեվրոպական լեզվաբանությունը մերժում է լեզվի ծագման բուն հարցադրումը, համարելով այդ ոչ գիտական և, լավագույն դեպքում, ոչ կարևոր։ Սա իր ցայտուն արտահայտությունն է գտել այն փաստի մեջ, որ Société de linguistique de Paris հատկապես հիշատակել է իր կանոնադրության մեջ, որ նա իր աշխատանքների ծրագրից հանում է լեզվի ծագման հարցը։[1]

Այս դրույթի հետ համաձայնում են հնդեվրոպական լեզվաբանները։ Սոսյուրը ասում է. «Ոչ մի հասարակություն չգիտի և երբեք չի ճանաչել լեզուն այլ կերպ, քան նախընթաց սերունդների ժառանգություն, որն ընդունվում է այնպես, ինչպես նա կա։ Ահա թե ինչու լեզվի ծագման հարցը այն նշանակությունը չունի, որ նրան սովորաբար վերագրվում է։ Այս հարցը չարժե նույնիսկ դնել»։[2] Վանդրիեսը ավելացնում է. «Երբ ասում են, թե լեզվի ծագման պրոբլեմը լեզվաբանությանը չի վերաբերում, դա մըշտապես զարմանք է հարուցում, սակայն դա ճշմարտություն է...։[3] Լեզվի ծագման պրոբլեմը մնում է լեզվաբանի իրավասությունից դուրս»,[4] որովհետև այդ պրոբլեմը «ոչ մի բավարար լուծման չի ենթարկվում»։[5]

Նույն՝ մտքերն ենք գտնում լեզվի ուսումնասիրության ներածական գրքերի ու դասընթացների մեջ։ Այսպես, օրինակ, Palmer-ը ճիշտ է, վերապահություն անելով, որ դա իր անձնական կարծիքն է (մենք տեսանք, որ այդ այդպես չէ), գրում է. «Լեզվի ծագման վերաբերյալ դատողությունը լեզվաբանության էական մասը չէ, ինչպես մենք այն հասկանում ենք, այն չափով, որքան և ֆիզիկոսները կոչված չեն կառուցելու նյութի ծագման թեորիաները»։[6] Հնդեվրոպաբանության արդի վիճակը նկարագրող մյուս աշխատության մեջ լեզվի ծագման հարցը առհասարակ բաց է թողնված, որովհետև լեզվի սկզբնական կազմավորման (origina l

---

1 Այս առթիվ Iespersen իրավացիորեն նկատում է. «Որչափով, որ այս երկու պրոբլեմները (լեզվի ծագման և լեզվի ապագայի) կարող են մեկնաբանվել գիտական ոգով, նրանք չպետք է մնան բացառապես դիլետանտների համար»։ (Iespersen, հիշ. աշխ., էջ 96)։

2 Saussure, հիշ. աշխ., էջ 105 (ֆր.)։

3 Vendryés, հիշ. աշխ., էջ 6 (ռուս. 19)։

4 Նույն տեղը, էջ 8 (ռուս. 21)։

5 Նույն տեղը, էջ 366 (ռուս. 284)։

6 Palmer, An introduction to modern linguistics, Լոնդոն, 1936, էջ 9։

language making) դարաշրջանը առմիշտ թաքնված է նախապատմական իրադարձությունների խավարում»։[1]

Նման ագնոստիկ դատողությունները, իհարկե, չեն նշանակում, որ հնդեվրոպական լեզվաբանները իրենց կարծիքը չունեն լեզվի ծագման մասին, որ նրանք երբեք չեն արտահայտվել այդ հարցի առթիվ և չեն արտահայտվում։ Իհարկե, ո՛չ։ Նրանք առաջադրում են մի շարք հիպոթեզներ, նույնիսկ պաշտպանում են իրենց կոնցեպցիաները, բայց զգալով այն հողի անհաստատությունը, որի վրա պետք է կռվեն, ավելի զգուշավոր են համարում շրջանցել նրան կողմնակի ճանապարհով, եթե ոչ ամբողջովին հեռանալ նրանից։

Ես, իհարկե, կանգ չեմ առնի այնպիսի, մեղմ արտահայտված, անլուրջ դրույթների վրա, ինչպես են Iespersen-ի մտքերը, որ ենթադրում է, թե «լեզուն առաջացել է իբրև զվարճություն, երբ աշխատանքից ազատ ժամերին խոսքի օրգանները մարզում էին այսպիսի սպորտով»,[2] կամ նրա լիրիկ դատողությունների վրա, որ «լեզուն ծնվել է մարդկության ռոմանտիկ շրջանում (courting days of the mankind)․ լեզվի առաջին տարրերը ես ինձ պատկերում եմ իբրև ինչ որ միջին բան տանիքի վրա կատվի տված գիշերային համերգների և սիրահարված սոխակի ներդաշնակ երգի միջև»։[3] Վանդրիեսը, որ չնայած իր պնդումին, թե լեզվաբանի համար անթույլատրելի է զբաղվել լեզվի ծագման հարցերով, շարադրելով իր հայացքները այս հարցի առթիվ, շատ բանում կանգնած է ճիշտ ուղու վրա։ Նա այսպես է բնորոշում հնչյունական լեզվի առաջացման պայմանները․ «լեզուն գոյացել է հասարակության ընդերքում և ծագել այն օրը, երբ մարդիկ պահանջ զգացին հաղորդակցության», և այն ժամանակ, երբ «մարդկային ուղեղը բավականաչափ զարգացած էր լեզուն օգտագործելու համար»։[4] Բայց Վանդրիեսը կանգ է առնում կես ճանապարհին, պատասխան չտալով այն հարցին, թե ի՞նչի հետևանք էր մարդկանց հաղորդակցության պահանջը, ի՞նչու առաջացավ այդ հաղորդակցության հասարակական անհրաժեշտությունը։ Նա, թե-

---

[1] W. L. Graf, Language and languages, 1932. Քաղված է ըստ Մ. Լ. Բիբոժակյալայի գրախոսության «Լեզու և մտածողություն» ժողովածուից, III—IV պր., էջ 331։

[2] Iespersen, հիշ. աշխ., էջ 433։

[3] Նույն տեղը։

[4] Vendryès, հիշ. աշխ., էջ 13 (ռուս. 201)։ Հմմտ. Ռենանի մտահղացումով որ լեզուն մարդու արտահայտման ձևն է և արտաքին թարգմանությունն ու միտքը պետք է առաջնային միաժամանակ» (հիշ. աշխ., էջ 92)։

նանի և հետագա մի քանի լեզվաբանների նման, հակամետ է կարծելու, որ լեզուն սրանչելի պարգև է կամ մարդու ֆիզիկական բնության հատկությունը։ Նա մերժում է լեզվի պատկերացումը իբրև «իդեալական» գոյության, որ զարգանում է անկախ մարդուց և հետապնդում իր սեփական նպատակները։[1]

Ընդհակառակը, նա պնդում է, որ «լեզուն գոյություն չունի անկախ նրանցից, ովքեր մտածում ու խոսում են»։[2] Բայց սա պատասխան է ենթադրում այն հարցին, թե ի՞նչն է բնորոշում մտածողության զարգացումը, որի անդրադարձումը նա համարում է լեզուն։ Վանդրիեսը պատասխան ունի. «լեզվի պատմությունը... թույլ է տալիս սահմանելու սոցիալական զարգացման որոշ ազդեցությունը մարդկանց մտածողության վրա»։[3] Բայց այստեղ նոր հարց է ծագում. իսկ ի՞նչն է բնորոշում այն, ինչ Վանդրիեսը անվանում է „evolution social des hommes"։ Այս էվոլյուցիայի ո՞ր փուլը և ի՞նչ հանգամանքների բերմամբ կյանքի կոչեց հնչյունական լեզուն։ Եվ այստեղ Վանդրիեսը ի վիճակի չէ պատասխան տալու. նա տատանվում է լեզվի ծագման վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ հիպոթեզներից մեկի շրջանակում։

Հարկ է զգացվում այստեղ ևս համաձայնելու Ն. Յա. Մառի խոսքերի հետ։ Թեկուզ և առանձին հնդեվրոպական լեզվաբանների աշխատություններում դրական դատողություններ կան լեզվի ծագման մասին, բայց դրանք բոլորը թռուցիկ են, չեն կազմում նրանց լեզվաբանական աշխարհայացքի կենտրոնը, կամ մինչև խորքը թափանցված են տարակույսի և իրենց անկարողության միանգամայն ճիշտ գիտական ըմբռնման ոգով։[4]

Հարեթական թեորիան այլ կերպ է մոտեցել լեզվի ծագման հարցին։ Նա լեզվի ծագման պրոբլեմը չի անջատում այդ վերնաշենքային կատեգորիաների ծագման, հասարակության լինելիության պրոբլեմից։ Լեզվի նոր ուսմունքը մարդկային հասարակության ծագումը հարուցող պատճառները գտնում է նյութական կյանքի պայմաններում։

Իսկ ե՞րբ կարող էր առաջանալ մարդկային լեզուն։ Այն ժամանակ, երբ նրա պահանջն առաջացավ և երբ առկա էին նրա

---

1 Նույն տեղ, էջ 420 (ռուս. 322)։

2 Նույն տեղ, էջ 417։

3 Նույն տեղ, էջ 414 (ռուս. 318)։

4 «Լեզվաբանությունը և մատերիալիզմը» ժողովածուի առաջաբանը, Ընտ. երկ. II հ.։

ծագման նախադրյալները, որչափով որ «մարդկությունը միշտ այնպիսի խնդիրներ է դնում, որոնք նա կարող է լուծել, որովհետև մոտիկից քննելիս միշտ պարզվում է, որ խնդիրն ինքը ծագում է միայն այն ժամանակ, երբ նրա լուծման նյութական պայմաններն արդեն գոյություն ունեն, կամ, գեթ գտնվում են լինելության պրոցեսում»։[1]

Իսկ ե՞րբ են նյութական պայմանները կյանքի կոչել մարդուն, իբրև մտածող և խոսող էակի։ Սրան մենք ունենք հստակ պատասխան. «աշխատանքն է ստեղծել մարդուն»։[2] Աշխատանքը մարդկային հասարակության սպեցիֆիկան է, նա այն է, ինչը նրան տարբերում է կենդանական աշխարհից, որից դուրս է եկել մարդը. «աշխատանքի միջոցների գործածությունն ու ստեղծումը, որ թեև իրենց սաղմնային ձևով հատուկ են որոշ տեսակի կենդանիներին, կազմում են մարդկային աշխատանքի առանձնահատուկ կերպով բնորոշ գիծը»։[3]

Աշխատանքի պրոցեսում «կազմավորված մարդիկ հասան այն բանին, որ նրանք պահանջմունք զգացին որևէ բան ասել միմյանց։ Պահանջմունքը իր համար ստեղծեց օրգան. կապիկի անզարգացած կոկորդը բարեփոխվում էր դանդաղորեն, բայց անշեղ կերպով, ելևէջների աստիճանական ուժեղացումով, և բերանի օրգանները հետզհետե վարժվեցին մեկը մյուսի հետևից արտասանել հոդավոր ձայներ»։[4] Համարյա բոլոր հնդեվրոպաբանները ընդունում են այն դրույթը, որ լեզուն առաջացել է հաղորդակցման անհրաժեշտությունից։ Թերևս, միայն Iespersen-ն է բացասում այս, գտնելով, թե «կատարելապես կարելի է, որ լեզուն առաջացած լինի պատահաբար, ախորժելի, իսկ թերևս, և ուղղակի տարօրինակ ձայներ հանելով իրեն և ուրիշներին զվարճացնելու համար խոսակցական օրգանները օգտագործելու հետևանքով»։[5]

Մառը ապացուցում է, որ «հնչյունական լեզուն առաջացել է նյութական կուլտուրայի զարգացման որոշակի աստիճանի վրա միայն, որովհետև մինչև արտադրության արդեն մշակված ու կատարելագործված գործիքի ստեղծումը հնչյունական լեզու չկար և

---

[1] Կ. Մարքս, Ընտիր աշխատություններ, I հ. էջ 270։

[2] Ֆ. Էնգելս, Աշխատանքի դերը կապիկի մարդացման պրոցեսում, Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, XIV հ., էջ 452։

[3] Կ. Մարքս, Կապիտալ, I հ., էջ 121, 1935 թ.։

[4] Ֆ. Էնգելս, Աշխատանքի դերը կապիկի մարդացման պրոցեսում։ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, XIV հ., էջ 455։

[5] Iespersen, հիշ. աշխ., էջ 437։

չէր կարող լինել։[1] Հնչյունական լեզուն, իբրև հաղորդակցման գերիշխող, իսկ այնուհետև համատարած ձև համեմատաբար ուշ հանդես եկավ փոխարինելու երկարատև ժամանակամիջոցում իրեն նախորդած ձեռնալեզվին, որը նույնպես անցել է զարգացման մի շարք ստադիաներ, մինչև որ իր հնարավորություններով բավարարել է հաղորդակցության պահանջները։[2]

Պալեոնտոլոգիական անալիզի մեթոդով բացահայտելով բառերի նշանակության փոփոխության պատմությունը, լեզվի փաստերը զուգադրելով հնագիտական և ազգագրական տվյալների հետ, Ն. Յա. Մառը սահմանում է մարդու պատկերացման շրջանը նրա պատմության զանազան էտապներով, իր հետևություններով հաստատելով, որ «բոլոր գաղափարները փոխ են առնված փորձից, իրականության ճիշտ թե աղճատված արտացոլումն են»։[3] Լեզվի պատմությունը անխզելիորեն կապված է մտածողության պատմության հետ, իսկ մտածողությունը, ինչպես և լեզուն, «սուվերեն ու անսահմանափակ է իր ունակության սաղմերով, իր կոչումով, իր հնարավորություններով, իր պատմական վախճանական նպատակով, բայց նա սուվերեն չէ ու սահմանափակ է ըստ առանձին իրագործման ըստ այս կամ այն ժամանակում տվյալ իրականության»,[4] որչափով որ «գիտակցությունը երբեք չի կա-

---

1 Ինչու այնպես դժվար է դառնալ լեզվաբան-տեսաբան, Ընտ. երկ., II հ., էջ 408։

2 Հմմտ. Van Ginneken, „La reconstruction typelogique des langues archaiques de l'umanité «ֆրանսիական ազգագրագետներն ու հոգեբաններն այժմ համամիտ են այն բանում, որ շարժումների լեզուն նախորդել է հնչյունականին» (էջ 99) և նրա մեջ բերած ֆիզիոլոգ V. Negus-ի կարծիքը (Themeckanisme of the laryngs, Լոնդոն, 1929), «ձեռքերը բավականաչափ զարգանալուց երկար ժամանակ առաջ շարժումների լեզուն հավանաբար ծառայում էր մարդու ամեն մի պատկերավոր բան արտահայտելու համար (tout ce qui est representation)։ Միայն ժամանակի ընթացքում հնչյունական լեզուն փոխարինեց շարժումների լեզվին, սակայն ոչ թե դուրս մղելով նրան, այլ միայն երկրորդական դեր հատկացնելով» (նույն տեղ)։

3 Ֆ. Էնգելս, «Անտի-Դյուրինգի» նախապատրաստական աշխատանքներից. Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, XIV հ., էջ 347։ Հմմտ. Լենինի խոսքերը. «առաջին մարդկանց լեզուն որևէ չափով բնության արձագանքն էր մարդկանց գիտակցության մեջ»։ Հիշ. աշխ., էջ 136։

4 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ. Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր XII հ., էջ 87։ Այս առնչությամբ արժե հիշատակել Լենինի խոսքերը. «սկսած իր հանդես գալու մոմենտից լեզուն նույնքան կատարյալ էր, որքան և իր արտացոլած մարդկային միտքը, բայց նրա անհատակ և ասես միմյանց հետ շաղկապված մասերը սպասում էին երկար ժամանակի իրենց լրիվ զարգացման

բող այլ բան լինել, քան գիտակցական կեցություն, իսկ մարդկանց կեցությունը նրանց կյանքի ռեալ պրոցեսն է»։[1] Բայց հասարակական կեցությունը փոփոխական է, լի է դիալեկտիկական հակասություններով ու պայքարով, իսկ «մարդիկ, զարգացնելով իրենց նյութական արտադրությունը, իրենց նյութական հաղորդակցությունը, այդ իրականության հետ միասին փոփոխում են նաև իրենց մտածողությունն ու իրենց մտածողության արդյունքները»։[2] Ուստի և լեզուն, ինչպես և մտածողությունը, պատմական փոփոխվող կատեգորիա է, և այն հարցին, թե ի՛նչ է լեզուն, փոխանակ Վանդրիեսի ֆորմալիստական ձևակերպման, թե «լեզուն... նշանների սիստեմ է»,[3] կամ «Հոգեկան ու ֆիզիոլոգիական նշանակների ամբողջություն, որ մարդն օգտագործում է խոսելիս»,[4] կամ Սեպիրի մետաֆիզիկ բնորոշման, որի կարծիքով լեզուները ոչ այլ ինչ են, «քան անտեսանելի ծածկույթներ, որ վարագուրում են մեր հոգին և կանխորոշված ձև տալիս նրա ամեն մի սիմվոլիկ արտահայտության»,[5] Ն. Յա. Մառը պատասխանում է. «դժվար է բնորոշում տալ, որովհետև լինելով նյութական փոփոխման բազայի, արտադրության, կամ նրանից անխզելի կամ նրան մոտիկից հարող վերնաշենքային ֆակտորի, սոցիալական կառուցվածքի ստեղծագործություն՝ լեզուն նմանապես պատմական արժեք է, այսինքն առանց հրեշավոր անախրոնիզմի չի կարելի տալ նրա ոչ իդեոլոգիական, ոչ էլ տեխնիկական միասնական բնորոշումը... փոխվում էր լեզվի ֆունկցիան, փոխվում էր լեզվի սպասարկած տարածությունը, փոխվում էր ներքին կարգի ընդգրկման ծավալը՝ որակված առարկաների քանակը, փոխվում էր խոսակցական արտադրության գործիքը, փոխվում էր նրա պրոցեսը և այլն»։[6]

համարո «Հիշ. աշխ, էջ 119) և նրա պարզաբանումը, որ «հաստատելով, որ նախնադարյան լեզուն ուներ այնպիսի տարրեր, որոնք անհրաժեշտ էին նրա ամբողջության համար, մենք հեռու ենք այն ենթադրությունից, որ ամենից հին ժամանակների մեխանիզմը նրանում արդեն գտնվում էր զարգացած վիճակում. նրանում կար ամեն ինչ, բայց անհատակ ու անջատ (confusément et sans distinction)։ Միայն ժամանակն ու մարդկային մտքի զարգացումը կարողացան անդամազատում կատարել այդ խառնակ սինթեզի մեջ, յուրաքանչյուր տարրին հատկացնելով իր առանձին տեղը...» Հիշ. աշխ., էջ 112։

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, IV հ., էջ 16։

[2] Նույն տեղ, էջ 17։

[3] Vendryès, Հիշ. աշխ., էջ 8 (ռուս. 21)։

[4] Նույն տեղ, էջ 285 (ռուս. 217)։

[5] Sapir, Հիշ. աշխ., էջ 237։

[6] Լեզուն և գիրը, Ընտ. երկ. II հ., էջ 357։

Ն. Յա. Մառը, հակառակ հնդեվրոպաբանների ճնշող մեծամասնության կարծիքի, ժխտում է, որ մշակված, հոդորոշ հնչյունը՝ ֆոնեման հնչյունական լեզվի սկզբնական ձևն է։ Լեզվաբանության պալեոնտոլոգիան բացահայտում է, որ հնչյունական լեզուն սկսվել է խառն, անհոդորոշ հնչյունական կոմպլեքսներից, այսպես կոչված, լեզվաբանական տարրերից, որոնց թիվը Ն. Յա. Մառը էմպիրիկ կերպով սահմանում է չորս՝ հսկայական թվով հետագա տարատեսակներով... «Սկզբում պարզ հնչյուններ չկային էլ, ինչպես չկային նաև անմիջականորեն նրանց նախորդող բաղկացուցիչ դիֆթոնգոիդներ, այլ կային դիֆթոնգայիններ իրենց սկզբնական դեռևս չանդամազատված բարդությամբ, որոնք առաջինը ազդանշան հանդիսացան այս կամ այն առարկաները նշանակելու, այս կամ այն նշանակությունն ստանալու համար, որպեսզի դառնան բառեր»։[1]

Լեզվաբանական չորս էլեմենտների պալեոնտոլոգիական անալիզով հաստատվող հնչյունական արտահայտությունները, բնականաբար, առաջին հնչյունական կոմպլեքսների վերարտադրությունը չեն։ Նրանք գոյություն ունեցող ոչ մի լեզվի մեջ չեն պահպանվել իրենց սկզբնական ձևով և չէին կարող պահպանվել։

Հատկապես լեզվաբանական էլեմենտների հարցը ոմանք համարում են ամբողջ հաբեթական թեորիայի գրեթե անկյունաքարը, մյուսներին նա պատկերանում է նրա ամենախոցելի տեղը։ Հիմք չկա պնդելու, որ լեզվաբանական էլեմենտների դրույթը իր ժամանակակից դրությամբ անվիճելի է իր բոլոր մասերով։ Դա մնում է զգալիորեն իբրև մի ճշմարտանման հիպոթեզ, որչափով անկասկած է, որ հոդորոշ հնչյունը սկզբնական չէր. սրան հակասում են թե՛ լեզվի և թե՛ բնա-պատմական տվյալները։ Այս միտքն ընդունելու հակում ունեն նաև արևմտաեվրոպական առանձին լեզվաբաններ։ Բայց այս հիպոթեզը կարիք ունի մշակման և ստուգման։Հավասարապես սխալ կլիներ նրա և՛ հախուռն ժխտումը և՛

[1] Հաբեթական թեորիա. Ընտ. երկ. II հ., էջ 16. Հմմտ. Van Ginneken-ի կարծիքը, որ գտնում է, թե միջարկությունները իրենց բնույթով ամենից մոտիկ են սկզբնական հնչյունական լեզվին։ Այն փաստը, որ միջարկությունները առավելապես արտահայտվում են բաղաձայն հնչյուններով, որոնք հաճախ հոդորոշված չեն, Van Ginneken-ին բերում է այն "մտքին, որ այդպիսին էր հնագույն խոսքերի հնչյունական ձևը (նրա տերմինաբանությամբ mots-ches), որոնք միայն հետագայում բաժանվեցին վանկերի (Van Ginneken. La reconstruction typologique des langues archaiques de l'humanité, Ամստերդամ, 1939, էջ 5)։

անվերապահ ընդունումը։ Ավելի ևս անթույլատրելի է, իհարկե, ըստ էլեմենտների անալիզը կիրառել ամեն մի լեզվական երևույթի և դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ։ Ամեն մի խոսք վերագրել մեկ կամ մի քանի էլեմենտների՝ առանց հաշվի առնելու տվյալ լեզվի ու տվյալ խոսքի զարգացման պատմությունը, սեմանտիկայի, բառի ստեղծած պատմական իրադրության օրենքները։ Այս թեթև ու յուրաքանչյուրին մատչելի զբաղմունքն ունի ֆորմալ-համեմատական մեթոդի բոլոր թերությունները, բայց և նրա հանդեպ ունի այն տարակուսելի առավելությունը, որ փորձում է ձևացնել իրեն իբրև նոր խոսք գիտության մեջ, մինչդեռ իրականում այն հանդիսանում է գիտության դիմակավորում կամ քամահրանք այն բանի, ինչ Ն. Յա. Մառն անվանում էր պալեոնտոլոգիական մեթոդ։

Լեզվաբանական դիֆուզ էլեմենտի ֆունկցիան էր արտահայտել ամբողջական միտք, այսինքն՝ դա հանդիսանում էր յուրատեսակ նախադասություն. «Նյութական լեզուն չի սկսվում ոչ միայն հնչյուններից,— ասում է Ն. Յա. Մառը,— այլև խոսքերից, խոսքի մասերից, այն սկսվում է նախադասություններից... ակտիվ և ապա պասիվ մտքից, այսինքն՝ սկսվում է շարահյուսություններից, բառաշարքից, որից աստիճանաբար անջատվում են նախադասության մասերը, որոնք որոշակի են դարձել ըստ խոսակցության մեջ նրանց գտնվելու տեղի»։[1] Ստադիալ զարգացման առաջին աստիճաններում ոչ մի մեկուսացած ֆոնետիկ երևույթ չկա, ինչպես չկար խոսքերով արտահայտվող առարկաների փոխհարաբերության հատուկ հնչյունական ձևավորման որևէ սիստեմ, այսինքն՝ նյութականորեն կառուցված պաշտոնային մորֆոլոգիայի հիշողությունն անգամ չկար. դա փոխարինվում էր շարահյուսական հնարներով։[2]

Մերժելով նախալեզվի (ինչ անուն էլ նրան տալու լինենք) բուն իսկ իդեան, հաբեթական թեորիան լեզվական զարգացման

---

1 Ինչու այնպես դժվար է դառնալ լեզվաբան-տեսաբան, Ընտ. երկ. II հ., էջ 417։

2 Բրետոնական ազգ. փոքրամ. լեզու, Ընտ. երկ. IV հ., էջ 218։ Ն. Յա. Մառի այս ընդգծմանը բավական մոտենում է Whitney, որի կարծիքով մարդիկ սկսել են ոչ թե խոսքի մասերից, որ նրանք այնուհետև իբր թե սկսել են միացնել, այլ հնչյուններից, որոնք ընդհանուր բնույթ ունեին և պահպանում են խոսքի մասերը իրենց սաղմի մեջ։ Ենթադրել, որ մարդ սկզբում տիրապետում էր արտահայտության բարդ ձևին, նշանակում է մոռանալ լեզվի հրաշապատում ծագման թեորիային (Նույն. աշխ., էջ 248—249)։

պրոցեսը տեսնում է բնավ ոչ աստիճանական ուղղագիծ շարժման մեջ սկսած լեզվի սկզբնական միասնությունից դեպի բազմակիություն, ինչպես այդ պատկերացնում է լեզվաբնտանիքների վերաբերյալ ուսմունքը։ Մեյեն գտնում է, որ հնդեվրոպական լեզուն այն լեզուն է, որը «փոփոխության որևէ աստիճանի վրա ներկայացնում է համահնդեվրոպական ձև և որը, այսպիսով, շարունակում է նրան անընդհատ հաջորդականությամբ»,[1] ընդ որում անցյալում կար մի մոմենտ, երբ այդ լեզուները մեկ լեզու էին»,[2] և «հնարավոր է, որ «հնդեվրոպական լեզուն» իր հերթին սոսկ մի ձևն է առաջներում գոյություն ունեցած ինչ որ լեզվի, որի ներկայացուցիչներն են նաև ուրիշ՝ ինչպես ներկայումս գոյություն ունեցող, այնպես էլ հին տեքստերով մեզ հասած լեզուներ»։[3]

Արտահայտվելով Ն. Յա. Մառի խոսքերով, հին լեզվաբանությունը լեզվի զարգացումը պատկերացնում էր «շարժմամբ, բայց շարժում դեպի հետ՝ միասնությունից բազմակիություն հակառակ տնտեսության աճման հաջողությունների, նրա շարժմամբ՝ տարբերի բազմակիությունից... դեպի միասնություն ու լայն ընդգրկում, այսինքն՝ վերնաշենքային աշխարհի կարևորագույն մասերից մեկը, որպիսին լեզուն է, այդ դրույթով դրված էր իբրև օտար մարմին, ասես հետ հետ գնացող խեցգետին, արտադրության և սոցիալական կառուցվածքի առաջ նետվող բազայի վրա»։[4] Հաբեթական թեորիան հաստատել է, որ «սկզբում մարդկային յուրաքանչյուր կոլեկտիվ ուներ իր հատուկ լեզուն. լեզվի զարգացման այս ստադիայում ընդհանուր են միայն տիպոլոգիան ու սեմանտիկան, այսինքն՝ խոսակցության կառուցվածքը և տրամադրության տակ գտնված փոքրաքանակ բառերի իմաստավորումը։ Մի շարք ցեղերի ընդհանուր լեզուն, առավել ևս միասնական լեզուն հետագա նվաճում է, որ սակայն ամբողջովին չէ իրականացած, այլ առաջացրել է զանազան լեզվաբնտանիքներ։ Ընտանիքների գոյացումը ինքը հետագա ստադիա է լեզուների զարգացման մեջ»։[5] Ն. Յա. Մառի պատկերավոր արտահայտությամբ, լեզվի նոր ուսմունքը շուռ տվեց այն բուրգը, որ հնդեվրոպաբա-

---

1 Մ ե յ ե, Հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության ներածություն, էջ 68—69։

2 Նույն տեղ էջ 69։

3 Նույն տեղ, էջ 71։

4 Սովետական Արևելքում գիտության ունեցած խնդիրները թեզիսք, էջ 13։

5 Հաբեթական թեորիայի մասին, Ընտ. երկ. III հ., էջ 3—4։

նության մեջ կանգնած էր նախալեզվի գաղաթի վրա, և դրեց լայն հիմքի՝ լեզուների սկզբնական բազմակիության վրա, որոնք, ինչպես և մարդկային հասարակությունը, ընթանում են դեպի միասնություն. ապագա տիեզերականորեն արտահայտիչ լեզուն— դա ապագա համամարդկային հասարակության անխուսափելի պրոդուկտն է։[1]

Լեզվաընտանիքները դիտելով իբրև հետագա գոյացություն, հաբեթական թեորիան արմատապես մերժում է անջատ ընտանիքների վերաբերյալ պատկերացումը, որոնցից յուրաքանչյուրը հաջորդականության կարգով ծագում է իր նախալեզվից։ Մերժելով լեզուների, տիպերի մաքրությունը, նոր ուսմունքը հաստատում է, որ չկա աշխարհում մի լեզու, որը խաչավորված չլինի, իսկ սա իր հերթին ստիպում է այլ կերպ մոտենալ լեզուների դասակարգման ու առանձին լեզվաընտանիքների բնութագրման, այսպես կոչված, լեզուների ցեղակցության և նրանց զարգացման հիմնական տենդենցների հարցին։ Լեզվաընտանիքը ստոհմական ընդհանուր տիպի նոր գոյացություն է նախկին տեսակների նոր ձևավորումով ու վերաձևավորումով, որ համապատասխանում է արտադրության նոր տեխնիկային, հանրակարգի նոր կառուցվածքին ու մտածողության նոր սիստեմին, որ որոշվում է մարդկության ոչ թե պարզապես ավանդված պաշարով, այլ նոր ծնվող ստեղծագործական կենցաղով նրա զարգացման յուրաքանչյուր աստիճանի վրա։ Լեզուների ցեղակցությունը նմանության պատճառ չէ, այլ հետևանք, ծագում չէ ընդհանուր լեզվից, այլ պատմական ուղիների ընդհանրություն, որոնցով ընթացել է նրանց զարգացումը, և ստադիայի ընդհանրություն, որի վրա նրանք կազմվել-մտել են սիստեմի մեջ։ Ցեղակցությունը առաջացել է պատմականորեն և ցեղակից լեզուների ընդհանրությունը նախասկզբնական չէ, այլ ստադիական։

Հնդեվրոպաբանությունը չի ընդունում լեզուների խաչավորումը կամ, ինչպես նա անվանում է, խառնում, իբրև նրանց զարգացման օրինաչափություն։ Սա տրամաբանորեն բխում է լեզվի զարգացման ամբողջ հնդեվրոպաբանական կոնցեպցիայից, համեմատական մեթոդի բուն էությունից։ Օրինակ, Մեյեն ջա՜նք է գործադրում ապացուցելու, որ ֆրանսերեն և իտալերեն լեզուները չեն պահպանել մի ձև, որը լատիներենից բխած չլինի, և նույնիսկ բառա-

---

[1] Հաբեթական թեորիայի հիմնական նվաճումները, Ընտ. երկ. I հ., էջ 216.

պաշարը, բացառությամբ փոքրաքանակ տեխնիկական տերմինների, ամբողջովին լատինական է, չնայած իտալական և ֆրանսիական ժողովուրդների կազմը չափազանց բարդ է։ «Այսպես է լինում հնդեվրոպական ու սեմական լեզուների բոլոր պարզաբանվող դեպքերում։ Սխալ է (fausse) այն հիպոթեզը... որ իբր անմիատարր ծագում ունեցող ժողովրդի (des origines multiples) լեզուն անխուսափելիորեն խառն է (mixte)»։[1] Այնուամենայնիվ, փաստերը համառ բան են, և հնդեվրոպաբանները նույնպես առիթ են ունենում ենթադրելու թեկուզ և այն, որ առանձին, շատ սակավաթիվ դեպքերում, կարող է լինել այնպիսի դրություն, որ լեզվի մեջ... միանան երկու ընտանիքների մորֆոլոգիական հատկանիշները»։[2] Բայց հենց այստեղ է դրության դժվարությունը, որի մասին անկեղծորեն խոսում է Մեյեն։ «Չի կարելի բացասել, որ որոշ դեպքերում կարող էին լինել իսկական խառնումներ (de melanges veritables)։ Երբ մենք հանդիպենք դրանց, լեզվաբանի խնդիրը կդժվարանա։ Եթե համեմատության միջոցով հաջողվել է կազմել մի քանի լեզուների պատմությունը, ապա դա հետևանք է միայն այն վստահության, որ յուրաքանչյուր նոր սիստեմ բացատրվում է ելնելով միասնական սիստեմից։ Այն դեպքում, երբ կարիք լինի նկատի ունենալ երկու նախասկզբնական սիստեմ (deux systèmes initiaux) և նրանց փոխհարաբերությունները, ժամանակակից մեթոդները անբավարար կլինեն... Եթե այս դժվարությունը, իրոք, հանդիպի, լեզվաբանությունը պետք է մշակի նոր, ավելի ճշգրիտ մեթոդներ»։[3] Կրկին հարկադրական խոստովանություն, որ մեթոդն անբավարար է։

Եվ այսպես, իրավացի՞ են արդյո՞ք նրանք, ովքեր պնդում են, որ եթե հաբեթական թեորիան որոշ ճիշտ դրույթներ ունի, ապա դրանք արդեն առկա էին հնդեվրոպաբանության մեջ, իսկ այն ամենը, ինչ նոր է հին լեզվաբանության համեմատությամբ, ավելի շատ մի քայլ հետ է, քան առաջ։ Մենք տեսանք, որ միշտ չէ նոր ուսմունքը «ոչ» ասում, երբ հնդեվրոպաբանները ասում են «այո»։ Հաճախ առանձին, չափազանց էական դրույթներում հնդեվրոպաբանությունը, մանավանդ հանձին իր առավել անկախ մտածող ներկայացուցիչների, և հաբեթական թեորիան չեն տարամիտ-

---

[1] RSL, 29 հ., II հր., էջ 88։

[2] Vendryès, Le langage, էջ 362 (ռուս. 280)։

[3] Meillet, Methode comparative dans la linguistique historique, Օսլո, 1925, էջ 83։

վում։ Բայց Մառն ասում է. «բառերի նույնությունը մտքերի նույնություն չի նշանակում»։ Իսկ որ հնդեվրոպաբանության, իբրև գիտական շկոլայի, մտքերի սխեմը, աշխարհայացքը հաբեթաբանության համեմատությամբ հանգում են տրամագծորեն հակառակ եզրակացությունների թեորիայում, հետազոտական աշխատանքի պրակտիկայում և լեզվական քաղաքականության մեջ՝ այդ անտարակուսելի է։ Ժամանակակից հնդեվրոպաբաններից ոմանք գրեթե ընդունում են լեզվական պրոցեսի միասնությունը, բայց որչափով որ նրանք լեզուն ու գիտակցությունը անջատում են հասարակական պրակտիկայից ու մարդկանց կեցությունից, լեզուն կորցնում է «գործնական իրական գիտակցության» իր բնույթը, իսկ ինքնամփոփ լեզվաընտանիքները իրենց նախալեզուներով վերացնում են գենետիկ հարցերը դնելու, առավել ևս դրանք լուծելու հնարավորությունը։ Լեզվի ու մտածողության և դրանց երկուսի, իրոք, բարդ դիալեկտիկական կապերի անտեսումը այն բանի հետ, ինչ պայմանավորել է մարդկային հասարակության թե՛ ծագումը և թե՛ զարգացումը, հնդեվրոպաբանությանը զրկում է իր դիսցիպլինը պատմական, հասարակագիտական լիարժեք գիտության վերածելու հնարավորությունից։ Մահացած սխեմաների մեջ նոր սոցիոլոգիական կյանք ներշնչելու բոլոր փորձերը դատապարտված են անհաջողության, որչափով որ մեթոդը մնում է հինը, մինչդեռ հենց այդ մեթոդն է հին լեզվաբանությանը հասցրել փակուղու։ Իսկ մեթոդի փոփոխությունը պահանջում է հրաժարվել ոչ միայն հին գիտական, այլև հին հասարակական մտածողությունից, բայց այդ անելու հակում առայժմ չի նկատվում։ Որչափով որ իր ուժի մեջ է մնում Մառի ձևակերպումը, որ «հնդեվրոպական լեզվաբանությունը մահացող բուրժուական հասարակայնության մսից ու արյունից է», լեզվի գիտության ապագան պատկանում է ոչ թե հնդեվրոպաբանության, այլ «լեզվի նոր ուսմունքին»։

Սակայն սա նախատեսում է հաբեթական թեորիայի ոչ թե պասիվ ժառանգում, այլ նրա յուրացում, մշակում ու վերամշակում։ Տեղում դոփելը թեորիայի հարցերում ևս անխուսափելիորեն հանգում է հետ մնալուն և տարընթացին։ Իր վերջին աշխատություններից մեկում Մառը, նշելով լեզվի նոր ուսմունքի «դիտավորյալ ներողամիտ քննադատությունը», գրում էր. «իմ աշակերտների ու հետևորդների մոտ ինքնաքննադատությունը կրկնակիորեն կաղում էր. 1) քիչ է ասել, թե հաբեթական թեորիան «սխալներից զերծ

չէ», երբ նրա մեջ էական բացեր կան. 2) Համենայն օպտիմիստական է այն պնդումը, թե իբր քաղաքավարի կերպով սխալներ անվանված բացերը «այժմ արդեն հիմնականում վերացվում են», երբ այդ այնքան էլ հեշտ չէ անել: Ինչպես որ հաբեթական թեորիայի նվաճումներից հրաժարվելով չի կարելի մշակել լեզվի մարքսիստական-լենինյան ուսմունքը, այնպես էլ... ինքը հաբեթական թեորիան չի կարող ավելի բարձր աստիճանի հասցվել, եթե նա չդառնա մասսայական աշխատանքի և ստուգման առարկա»:[1] Այս ստուգումն ու աշխատանքը, բնականաբար, կհասցնեն որոշ դրույթներից հրաժարվելուն, մյուսների ճշտմանը, թերակատարի զարգացմանը, անվիճելիի յուրացմանը իբրև սովետական գիտության նվաճումների: Իսկ անվիճելի է մնում և կմնա այն, որ «հաբեթական թեորիան ոչ մայն ընդմիշտ կվերացնի առանձին լեզուների մեկուսի լինելու հարցը, այլև միաժամանակ, լեզվի բնագավառում կմիավորի զանազան, այսպես կոչված, ռասաներ, որոնք հիրավի մի ռասայի՝ մարդկության տիպոլոգիական տարբեր գոյացություններ են նրա սոցիալական և նյութական զարգացման տարբեր աստիճաններում»:[2] Չէ՞ որ ըստ էության Ն. Յա. Մառը պատմական, բանասիրական, հնագիտական, լեզվաբանական իր կոնկրետ աշխատանքների ողջ բազմազանությամբ ու այլազանությամբ հանդերձ թեորիայի զարգացման բոլոր փուլերում ուսումնասիրում էր մեկ առարկա՝ մարդուն, ոչ իբրև ինդիվիդի կամ մենակ հերոսի, այլ մարդկային հասարակությունը: Մարդկության բախտն էր կազմում Ն. Յա. Մառի բոլոր հարցասիրության կիզակետը, իսկ ամեն մի անձնական, դասակարգային, ազգային, ռասայական ճնշումից նրա ազատագրման համար պայքարը հանդիսանում էր սովետական այս գիտնականի կյանքի ներվը:

[1] Առաջաբան հաբեթական ժողովածուի VII հ., էջ 3—4:

[2] Origine japhetique de la langue basque. «Լեզու և գրականության ժողովածու», I հ., էջ 260:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0081148

[804]

ЦЕНА

375